6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1994, ԵՐԵՔՇԱԲԹԻ # 170 (673)

Azg
Azg
armenian daily

SABCO
OVERSEAS TRADING LTD.
LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945
OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS
Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոտերդամի պահեստներից
ՃԽՊՈՑ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՈՀԱԼՅԱՐ
ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ իմքնաթիռով

ԱՆՑՈՒՊԱՐՀ

Մ. Օլբրայթ. Անդրկովկասը կարեւոր տարածաշրջան է ԱՄՆ-ի համար

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը եւ ԱՄՆ-ի նախագահի անձնական ներկայացուցիչ, ՄԱԿ-ում այդ երկրի մշտական ներկայացուցիչ Մադլեն Օլբրայթը Բաքվում կայացած բանակցությունները գնահատեցին որպես արդյունավետ:

Ալիեւը մասնավորապես ընդգծեց, որ հանդիպումն անցավ փոխըմբռնման ոգով: Ադրբեջանի ղեկավարությունը ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները համարում է առաջնային եւ իր կարելին կանի, որպեսզի դրանք զարգանան բոլոր ասպարեզներում՝ ի շահ երկու պետությունների, ասաց նա:

Ինչպես Բաքվից հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակիցը, նաեւ կարծիքներ են փոխանակվել Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հեռանկարների շուրջ: Նշվել է, որ հրադադարը, որի ռեժիմը պահպանվում է երեքուկես ամսից ավելի, մեծ նվաճում է: Պատասխանելով տարածաշրջան խաղաղարար ուժեր մտցնելուն վերաբերող հարցին, Հեյդար Ալիեւը այն կարծիքն է հայտնել, որ դրանք պետք է լինեն միջազգային:

«Անդրկովկասը շատ կարեւոր տարածաշրջան է Միացյալ Նահանգների եւ ամբողջ համաշխարհային հանրակցության համար: Նախագահ Բիլ Քլինթոնը անհրաժեշտ է համարում ազդակ հաղորդել այստեղ տեղի ունեցող դրական գործընթացներին», իր հերթին հայտարարեց Մադլեն Օլբրայթը:

ԱՐՍԵՆԱՐԵՍ

Ռասուլ Գուլիեւը դեմ է Հայաստանի տարածքով նավթամուղին

Բաքվում թուրքական ռադիոյին եւ հեռուստատեսությանը արված հայտարարության մեջ ադրբեջանական խորհրդարանի խոսնակ Ռասուլ Գուլիեւը հայտարարել է, որ ինքը կողմ է նավթամուղը Թուրքիայի տարածով անց կացնելուն: Նա ընդգծել է, որ ամենախելամիտ որոշումը կլինի նավթամուղի անցկացումը Նախիջեւանի, Իրանի եւ Թուրքիայի տարածով դեպի Միջերկրական ծով, այնտեղից էլ՝ եւրոպական շուկաներ: Ռասուլ Գուլիեւն ընդգծել է, որ ինքը դեմ է նավթամուղը Հայաստանի տարածով դեպի Թուրքիա անցկացնելուն:

ԼՏ

Մոսկվա. ԱՊՀ միասնացման հարցերը ուշադրության կենտրոնում

ՍՈՉԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՍՆԱՐՔ: Սեպտեմբերի 7-ին ԱՊՀ համակարգիչ խորհրդակցական կոմիտեի նիստում եւ սեպտեմբերի 9-ին կառավարությունների ղեկավարների ընդլայնված խորհրդում, արտաքին գործոց եւ պաշտպանության նախարարների մասնակցությամբ կքննարկվեն ԱՊՀ հետագա զարգացման կարեւոր հարցեր: Ինչպես հայտնեցին Ռուսաստանի ԱԳՆ-ում, կխոսվի տնտեսական դաշինքի իրականացման կոնկրետ միջոցառումների մասին: Առաջնայինների թվում են միջպետական տնտեսական կոմիտեի կոնոնադրության, վճարային միության ստեղծման համաձայնագրի նախագծերը: Կքննարկվի ԱՊՀ միասնացման միջոցառումների հեռանկարային ծրագիր, նախատեսվում է խաղաղական հուշագիր ընդունել դրա հիմնական ուղղությունների մասին: Կարեւոր տեղ կհատկացվի հայրենական մեծ պատերազմում նվաճված հաղթանակի 50-ամյակին նվիրված միջոցառումներին:

Իրանը կգոյատեւի հակառակ ամեն ինչի

Իրանի նախագահը հայտարարեց, որ այդ երկիրը փաստորեն հասել է տնտեսական անկախության, ինչը հաղթական անկախության հիմքն է: Թեհրանի համալսարանում մասնակցելով ավանդական ուրբաթօրյա նամազին, Ալի Ակբար Հաշեմի Ռաֆսանջանին նշեց, որ ներկայումս Իրանում արտադրվում է բնակչության կողմից սպառվող արտադրանքի 90 տոկոսը, եւ իսլամական հանրապետությունը կարող է գոյատեւել նույնիսկ իր դեմ համաշխարհային պատժամիջոցներ մտցնելու եւ սահմանները փակելու պայմաններում:

ԹՈՒՐՔԻԱ

Սյոմքազ Սոյսալ. «Ազերի-հայ պատերազմը պիտի կասեցնենք»

ԲԱՆԳԻ ՀԵՐՄԱՆ, ԱՐԱՔՍ

«Թուրքիայի արեւելքը խզանված է», այսպես հայտարարեց Թուրքիայի արտգործնախարար Սյոմքազ Սոյսալը, Հայաստանի եւ Վրաստանի հետ Թուրքիայի Դողուկափը եւ Ամսայ սահմանային դռները այցելելուց հետո, սեպտեմբերի 5-ին հայտնեց բուրքական «Հյուրիյեր» օրաթերթը:

Թուրքիայի Արդահան հաղթի Չիլդիր գյուղախաղամում գտնվող Ամսայ սահմանային դուռը փակվել էր 1937-ին Խորհրդային իշխանությունների միակողմանի որոշման հետեւանքով: Սոյսալն այս հարցի առթիվ հայտնեց, թե «Թուրքիան 240 միլիոն բուրքական լիրա (8 միլիարդ ամերիկյան դոլար) հատկացնելով դիտի բացի այս դուռը»:

Իսկ Կարս հաղթի Ակյակա գյուղախաղաքի մոտակայքում գտնվող Դողուկափը սահմանային դուռը փակվել էր բնդամենը մեկ տարի առաջ, 1993-ի հունիսի 14-ին: Թուրք արտգործնախարարն այս դռան բացմանը եւս հատուկ կարեւորություն տալով ասել է, թե իրենք ամեն տեսակ ջանքեր են գործադրում վերջ տալու համար հայ ադրբեջանական պատերազմին: Երբ այս դուռը բացվի պատերազմի ընթացքում, հնարավոր է, որ դա սկսվի մեկնաբանությունների տեղիք տա: «Մեր ազերի եղբայրների տեսակետից, պատերազմի ժամանակ այս դռան բաց գտնվելը կարող է նպաստակահարմար չլինել: Այդ պատճառով մի քիչ էլ պետք է համբերենք, որպեսզի նախ ազերի-հայ պատերազմը կասեցնենք եւ հետո էլ այս դուռը եւս բացվի, քանի որ Թուրքիա ամեն կողմից մուտք գործել հնարավոր է, բացի արեւելքից: Այստեղի դռները փակված վիճակում են», ասել է Սոյսալը:

ԱՇԽԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ

Պայթյուն Բագրատաշենի շուկայում. 13 զոհ եւ 46 վիրավոր

Նոյեմբերյանի շրջանի Բագրատաշեն ավանի սահմանամերձ շուկայի տարածքում սեպտեմբերի 4-ին, ժամը 12 անց 50 րոպեին տեղի է ունեցել դիվերսիոն գործողություն: Ինչպես տեղեկացրին կառավարության մամուլի ծառայությունում, անհայտ անձանց կողմից տեղադրված հզոր պայթուցիկ լիցքի պայթյունի հետեւանքով, ըստ նախնական տվյալների, զոհվել են 13 եւ վիրավորվել 46 մարդ՝ հայեր, վրացիներ, վրացաբնակ ադրբեջանցիներ: Որոշ անկախ աղբյուրների համաձայն, ադրբեջանցիներից զոհվել է երկու եւ վիրավորվել մեկ հոգի: Վարկածներ կան, թե պայթուցիկ նյութը լցված է եղել մի պարկի մեջ: Ըստ «Սնարի»-ի, որ մեջբերել է արտակարգ իրավիճակների պետական տեսչության տեղական մարմինների ներկայացուցիչներից ստացած տվյալները, պայթյունը տեղի է ունեցել ճանապարհի մեջ դրված ականից: Առայժմ դեռեւս վայր են մեկնել Հայաստանի դատախազության, ներքին գործերի, պաշտպանության նախարարությունների, ազգային անվտանգության վարչության աշխատակիցներից կազմված օպերատիվ խումբը: Ինչպես նաեւ առողջապահության առաջին փոխնախարար Դերենիկ Դումանյանը, բժշկության հատուկ մասնագիտացված բրիգադը: Կատարված դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: Որոշ դիտորդների կարծիքով, կատարվածն ավելի շատ ունի անձնական խնդրակային հաշիվ մարելու կամ վնաս հասցնելու նպատակ, քան քաղաքական նպատակներ:

Մյուս կողմից հայտնի դարձավ, որ ՀՀ ԱԳՆ-ն այդ դեպքի կապակցությամբ պատասխանում է հանդես գալ հայտարարությամբ:

ԼԼ.Հ.

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑ

Անկարան միացման կողմնակի՞ց

Կիպրոսական հարցը կարծես բարդությունների մի նոր փուլ է թեւակոխում: Ինչպես արդեն հայտնի է, այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության խորհրդարանը օգոստոսի 29-ի նիստում ձայների 30 կողմ, 16 դեմ հարաբերակցությամբ որոշում ընդունեց Թուրքիայի հետ ինտեգրացման մասին: Փաստորեն Դենքթաշի վարչակազմն այս որոշմամբ հրաժարվում է դաշնային պետության գաղափարից, առաջին պլան մղելով ՀԿԹՀ ինքնուրույնության ճանաչման հարցը եւ դրանով դյուրանավորելով հետագա բանակցություններին իր մասնակցությունը:

Որոշմամբ նախատեսվում է նաեւ Թուրքիայի հետ երկկողմ դաշնագրեր ստորագրել պաշտպանության, արտաքին քաղաքականության բնագավառներում, ինչպես նաեւ տնտեսական ինտեգրացիա:

Տես # էջ 5

ՀԱՄԱՌՈՏ

Կարաջիչը նոր քարտեզներ է պահանջում

Բոսնիայի Սերբական Հանրապետության նախագահ Ռադովան Կարաջիչը այն կարծիքին է, որ միջազգային միջնորդները պետք է Բոսնիայում ու Հերցեգովինայում տարածային սահմանազատման նոր քարտեզներ պատրաստեն, նկատի առնելով այն փաստը, որ անցած հանգստյան օրերին անցկացված հանրաքվեի ժամանակ բոսնիացի սերբերի 96 տոկոսը մերժեց «ցփման խաբի» քարտեզները, շաբաթ օրը Բելգրադից հաղորդեց ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակիցը: Այդ քարտեզները պետք է ավելի մեծ չափով հանդարտասխանեն բոսնիացի սերբերի ազգային շահերին, հայտարարել է Ռադովան Կարաջիչը:

«Պակիստանը չի դառնա ահաբեկչության հենակետ»

ԿԱՌԻՐԵ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պակիստանի վարչապետ Բենազիր Բհուտոն հայտարարեց, որ իր երկրի տարածքը երբեմն չի օգտագործվի եգիպտոսի նկատմամբ ահաբեկչական քայլերի նախապատրաստման համար: Նա ընդգծել է, որ այս տարվա հուլիսի 14-ին ստորագրված հանձնարարությունների փոխադարձ հանձնման պակիստանա-եգիպտական համաձայնագրի վավերացումից հետո Իսլամաբադը հատատուն կերպով կկատարի դրա դրույթները:

Ռաբինը եւ Արաֆաթը դափնեկիրներ

Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը եւ պաղեստինյան ազգային վարչության ու Պաղեստինի ազատագրման կազմակերպության ղեկավար Յասեր Արաֆաթը դարձան միջազգային համագործակցության բնագավառի Աստուրիացի արքայազնի հեղինակավոր միջազգային դափնեկիրներ: Ժյուրիի որոշման մեջ ընդգծվում է, որ քաղաքական երկու գործիչները «վճռական քայլեր գործադրեցին» Մերձավոր Արեւելքի իրադրության խաղաղ կարգավորման գործում:

ՎՐԱՍՏԱՆ

Վրացի գաղթականները հացադուլ հայտարարեցին

Վրաց-աբխազական համաշխարհություն մնում

ԹԲԻԼԻՍԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ՎՐԱՑԻՆՖՈՐՄ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Զուգդիդիի շրջանի Ռոխի գյուղում գտնվող վրացի մի խումբ գաղթականներ կիրակի օրը հացադուլ հայտարարեցին: Ինչպես նշվում է Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի միջազգային կազմակերպությունը հասցեագրված հայտարարության մեջ, իրենք ստիպված են եղել այդ քայլին դիմել այն պատճառով, որ մինչեւ օրս չեն կատարվել օգոստոսի վերջերին գաղթականների Աբխազիա վերադարձն սկսելու մասին խաղաղարար ուժերի ներկայացուցիչների, Վրաստանի կառավարության եւ մյուս պաշտոնական անձանց տված հավաստիացումները:

Մյուս կողմից, իրենց միջեւ հակամարտության համաղարափակ կարգավորման քաղաքական հանգամանքների շուրջ վրացական ու աբխազական պատվիրակությունների բանակցությունները ժամանակ ավարտվեցին գաղթականների եւ տարագրյալների կամավոր վերադարձի մասին հայտարարության ստորագրման արարողությամբ: Այդ մասին հաղորդեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնական ներկայացուցիչ Ջո Սիկսը:

Կողմերը հավաստեցին իրենց հավատարմությունը տարագրյալների կամավոր վերադարձի մասին 1994 թվականի ապրիլի 4-ին Մոսկվայում ստորագրված բաղկացուցիչ համաձայնագրերի դրույթներին եւ ընդունեցին, որ իրենց տները վերադարձող գաղթականները պետք է կխրատեն Աբխազիայի տարածքում գործող օրենքները:

Ինչպես հաղորդում է ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակիցը, պայմանավորվածություն է կայացել հաջորդ հանդիպումը անցկացնելու սեպտեմբերի 6-ին Սոչիում գաղթականների եւ տարագրյալների կամավոր վերադարձի համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման առնչությամբ:

Շեւարդնաձեն Եւրոպայից արտակարգ օգնություն է խնդրում

ԹԲԻԼԻՍԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն այսօր Եւրամիության 12 պետությունների դիմաց, խնդրելով Վրաստանին սննդամթերքով արտակարգ մարդասիրական օգնություն ցույց տալ այդ հանրապետությունում ստեղծված օրհասական վիճակի կապակցությամբ: Բնակչությանն ողղված ավանդական ուղիղեթերով Էդուարդ Շեւարդնաձեն հայտնեց, թե Վրաստանում անհնար է մթերային քաղաքաքաղաքներ մտցնել, քանի որ դրա համար չկան մթերատարներ: Ավելի վաղ Վրաստանի պետության ղեկավարը հայտարարել էր, թե հանրապետությունը գտնվում է զանգվածային սովի շեմին եւ առանց արտաքին օգնության չի հաջողվի դրանից խուսափել:



digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ծիծեռնակաբերդում ցեղասպանության թանգարան

Սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ հայոց ցեղասպանության 80 ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նախագահի մամուլի ծառայությունից «Առմենպրեսին» հաղորդեցին, որ նիստում ճարտարապետ Սաքուր Քալաջյանը ներկայացրել է Ծիծեռնակաբերդում կառուցվելիք հայոց ցեղասպանության թանգարանի շենքի նախագիծը, որն արժանացել է հանձնաժողովի հավանությանը: Որոշվել է ստեղծել էքսպոզիցիոն ենթահանձնաժողով, որի խնդիրները կլինեն թանգարանի համար ցուցանմուշների ընտրությունը եւ ցուցասրահների ձեւավորումը: Քննարկվել են նաեւ հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովի կազմակերպման աշխատանքների ընթացքը եւ հարցի շուրջ գիտական եւ գիտահանրամատչելի գրականության հրատարակման ծրագրերը: Այս խնդիրների կապակցությամբ զեկուցումով հանդես է եկել պետական հանձնաժողովի անդամ, ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ռուս ատոմագետները կրկին Մեծամորում

Սեպտեմբերի 5-ին երեւան ժամանեց Ռուսաստանի Դաշնության ատոմային էներգետիկայի նախարարության մասնագետների մի խումբ՝ առաջին փոխնախարար Լեւ Ռյաբեւի գլխավորությամբ: Ռուս մասնագետները, որոնց կազմում են նաեւ կոնստրուկտորներ եւ նախագծողներ, Մեծամորում կծանոթանան հայկական ատոմակայանի վերագործարկման աշխատանքների ընթացքին, ատոմակայանում աշխատող հայ եւ ռուս մասնագետների հետ կանց կացնեն խորհրդակցություն: Նախատեսվում է, որ երեւանում գտնվելու ընթացքում Ռոսատոմեներգոյի եւ Հայաստանի ներկայացուցիչները կստորագրեն արձանագրություն, որում մանրամասն կնշվեն աշխատանքների յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետները, կողմերից յուրաքանչյուրի պարտականությունները, ինչպես նաեւ առաջնահերթ ու դեռեւս վերջնական լուծում չստացած ֆինանսական աղահովության հարցը: Այդ մասին հաղորդեցին ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից:

«Շրջանում հաստատված հրադադարը մեծ բան է խաղաղության հասնելու հարցում», այս հայտարարությունն արեց ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցիչ Մադլեն Օլբրայթը, որը ուրբաթ եւ շաբաթ օրերին հանդիպեց ՀՀ նախագահի եւ արտգործնախարարի հետ, իսկ այնուհետեւ մեկնեց Բաքու: Մեծ գոհունակություն հայտնելով Հայաստանում ունեցած հանդիպումներից, եւ հատկապես տեսնելով ու համոզվելով, թե ինչպիսի դժվար պայմաններում են աղյուս եւ աշխատում Հայաստանում, տիկին Օլբրայթն իր հիացմունքն արտահայտեց: Պատասխանելով լրագրողներից մեկի այն հարցին, թե ինքը եւ իր ներկայացրած կազմակերպությունն ինչ կարծիք ունեն ռուսական զորքերի որոշ խմբաքանակ որոշես խաղաղարար տարանջատիչ ուժեր մտցնելու մասին, տիկին Օլբրայթն ասաց. «Կարեւորն այն չէ, թե ինչ ուժեր կօգտագործվեն կարգավորման համար, այլ այն, որ դրանք բաց լինեն իրենց հանձնված մանդատի կատարման նկատմամբ միջազգային վերահսկողություն իրականացնելու համար»:

«Մեր նպատակն է, հայտարարեց ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչը, ամրապնդել այն հրադադարը, որին հաջողվեց հասնել եւ ամրապնդել խաղաղությունը»:

Մադլեն Օլբրայթի կարծիքով, Ռուսաստանն ինքն է անցնում մեծ փորձությունների միջով, եւ կայուն չէ ոչ միայն նրա ներքին քաղաքականությունը, այլեւ արտաքինը: Թեեւ, նրա ասելով, նկատելի է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանն իրեն այնպես չի պահում, ինչպես ասում էր պատերազմի տարիներին, եւ չի խոչընդոտում տարբեր նախաձեռնություններին: Այդ կապակցությամբ տիկին Օլբրայթը որպես օրինակ բերեց վրաց-աբխազական հակամարտության գոտի ՄԱԿ-ի միջազգային ուժեր ուղարկելու գանկությունը: «Բայց քանի որ Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ հաստատված խաղաղություն չկար, այն է, պայմաններ չկային միջազգային ուժերի տեղակայման համար, որոշվեց այդ շրջան մտցնել ԱՊՀ խաղաղարար ուժեր ՄԱԿ-ի հավանությամբ», հայտնեց նա:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Մադլեն Օլբրայթ. «Ռուսական զորքերը կարող են մտնել որոշակի պայմանների դեպքում»

Ժամանակ առ ժամանակ ՄԱԿ-ի դիտորդներն անցկացնում են այսպես կոչված ստուգումներ, հաստատելու համար, թե ռուսական զորքերը ներդաշնակ են միջազգային օրենքների հետ:

«Այսինքն, որոշ պարագաներում հնարավոր է ռուսական ուժերի ներկայությունը, որովհետեւ նրանք իրոք կարող են աղահովել խաղաղություն», նշեց Մադլեն Օլբրայթը, կարեւորելով, որ Լեռնային Ղարաբաղում բաժանարար ուժերի տեղակայումը անհրաժեշտ է:

ՄԱԿ-ում ԱՄՆ ներկայացուցչի նման երկիմաստ հայտարարությունները գալիս են մի անգամ եւս հաստատելու, թե ամերիկյան կողմը Լեւոն Տեր-Պետրոսյան-Բիլ Քլինտոն հանդիպումից հետո կտրուկ ակտիվացրեց իր աշխատանքները դարաբաղյան հակամարտության հարցում: Եւ եթե տիկին Օլբրայթը որոշակի վերապահություններով հաստատեց ռուսական զորք մտցնելու խնդրին, ապա կոնգրեսական Վուլֆը կտրուկ դեմ արտահայտվեց դրան, ինչը պարզորոշ ցույց է տալիս, թե հակամարտության կարգավորման հարցում ԱՄՆ-ը դեռեւս կարող է նոր հայտարարություններով ու առաջարկներով հանդես գալ, եթե գգա, որ ռուսական կողմը խախտել է հավասարակշռությունը:

ՀԱՐՈՒԹ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆԳՐԱԳԱՐԱՁ

Դեռ թանաքը չչորացած, նոր «գյուտ»

«Փաստ» գործակալությունը շշմեցնում է իր «օպերատիվությամբ»

Անցած ուրբաթ, սեպտեմբերի 2-ին, գրել էինք այն անհեթեթ վիճակի մասին, որի մեջ մեր լրատվական գործակալությունների, մեղմ ասած, անուշադրության եւ անփութության պատճառով երբեմն ընկնում ենք թե մենք, թե ընթերցողները: Վկայաբերել էինք այդ գործակալությունների հրամցրած «բարմ» լուրերը, որոնք իրականում մի քանի շաբաթվա, երբեմն էլ մեկ ամսվա հնություն ունեն եւ արդեն իսկ արացոլվել են հայաստանյան մամուլում, մասնավորապես մեր թերթում: Եւ ահա հերթական «գյուտը» հաջորդ օրն իսկ, սեպտեմբերի 3-ի շաբաթօրյա թերթերում: «Հայաստանի Հանրապետություն», «Լրագիր» եւ «Առավոտ» թերթերը համերաշխորեն զեկուցել են նույն լուրը՝ «Շատ մեծ պատերազմում» ելոնի մասին», հաղված Ֆրանսիա կամ «Մոնդ» թերթի օգոստոսի 3-ի համարից: Լուրը նրանց, այդ թվում նաեւ մեզ էր տրամադրել «Փաստ» լրատվական գործակալությունը: Անշուշտ, գովելի է «Փաստի» ջանքը՝ հետեւել դրսի մամուլին եւ Հայաստանի կամ հայ ժողովրդի մասին տպագրված նյութերի վերաբերյալ տեղյակ պահել ընթերցողներին: Սակայն ցավալի է մի բան. «Փաստը», ըստ երեւույթին, ուշադիր չի հետեւում մեր՝ հայաստանյան մամուլին. «Մոնդի» վերոհիշյալ հոդվածի մասին մենք տպագրել էինք դեռեւս մեկ ամիս առաջ, օգոստոսի 5-ին, այսինքն՝ ֆրանսիական այդ թերթի տպագրությունից երկու օր անց, իսկ հոդվածն ամբողջությամբ տպագրել օգոստոսի 9-ի մեր համարում: Ավելին, օգոստոսի 25-ին տպագրել էինք նաեւ պատասխան այդ հոդվածին «Պատասխանում են թուրք իրավաբանները» վերնագրով: Այսպանից հետո «Փաստի» վարագիծը մեզ առնվազն զարմացնում է. կամ «Փաստը» չի հետեւում հայաստանյան մամուլին, կամ ավելի վատ՝ տեղյակ չէ, թե ինչ է տարածում: Անշուշտ, ցանկացած գործակալության իրավունքն է գրել ինչի մասին որ ինքն ուզում է, սակայն լրագրական էթիկան պահանջում է հետեւել հեղինակային իրավունքին: Տվյալ դեպքում «Փաստը» վերոհիշյալ լուրը տարածելիս պարտավոր էր նշել, որ այդ մասին իրենից առաջ գրել է «Ազգ» թերթը:

Մի հանգամանք եւս. «Փաստը» այդ լուրը քաղել է, ըստ երեւույթին, ոչ սկզբնաղբյուրից, այլ միջնորդավորված, քանի որ այնտեղ խեղաթյուրումներ կան: Միտում չունենք նվազեցնել «Փաստի» արած գործը ընդհանրապես, պարզապես վերոհիշյալ դեպքը մատնանշում ենք հետագա թյուրիմացությունների առաջն առնելու նպատակով:

ՍՓՅՈՒՌՔ

Աշխարհի ամենամեծ խանութի տերը 93-ամյա մի հայ է

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ. «Առաքել» օրաթերթը տեղեկացնում է, թե ֆրանսիական «Ֆիգարո» թերթի երկու թղթակիցներ վերջերս հանդիպել են Կանադայի ամենահարուստ մարդկանցից մեկին Հակոբ Ղըրմզյանին: Վերջինս սեփականատերն է աշխարհի ամենամեծ առեւտրական կենտրոնի, որը գտնվում է Այլբերտ նահանգի մայրաքաղաք Էդմոնտոնում: Պարսկաստանից գաղթած այս հայի անունը մտել է աշխարհի մրցանիշների Գինեսի գրքի մեջ, իբրեւ «հրաշք-ծերուկ»: Նա բեւեռնունեցող տարեկան է, սակայն շատ առողջ ու պայծառամիտ է: Ամեն օր անձամբ է հսկում իր գործերը, խոսում է յոթ լեզուներով եւ անգիր գիտի այն 860 վաճառասենյակների եւ 110 ճաշարանների անունները, որոնցից ամեն օր ստանում է հսկայական գումարներ: «Վեսթ Էդմոնթոն Մոլը» ունի 435 հազար քառակուսի մետր տարածություն, որտեղ գտնվում են 800 վաճառասենյակներ, 110 ճաշարաններ եւ 50.000 ինքնաշարժերի համար կայատեղիներ, հոկեյի հսկայական մի խաղադաշտ, պանդոկներ եւ հանրային հսկայական մի զբոսայգի: Այս կենտրոնի այցելուների թիվը օրական մոտավորապես 60 հազար է, իսկ շաբաթ օրերին այն հասնում է 350 հազարի: Դրա կառուցման ամբողջական ծրագրի իրագործումը տեւել է շուրջ յոթ տարի: Միլիարդատեր Հակոբ Ղըրմզյանի չորս զավակներ Կենտրոնի տնօրենները են, սակայն ընդհանուր տնօրենը մինչեւ օրս մնում է 93-ամյա հայրը, որը բոլորի կողմից ճանաչված է «Պարոն» մականունով:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վազգեն Ա-ի յոթնօրեքի կարգը

Սեպտեմբերի 3-ին Մայր աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի յոթնօրեքի կարգի կատարման արարողությունը:

Տեղեկվա ժամը 12-ն է: Ղողանջում են Մայր աթոռ ելնելու զանգերը: Վեհարանից եկեղեցականների բազմությունը հայոց կաթողիկոսական տեղապահ, Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի գլխավորությամբ շարժվում է դեպի Մայր տաճարի կենտրոնական մուտքը, որի կողքին է Վազգեն Ա-ի գերեզմանը: Կարգն սկսվում է «Հայր մեր»-ի երգեցողությամբ, առաջ բաց հերթի հնչում են հանվածներ Ավետարանից, աղոթքներ, երգեր, մաղթանքներ: Վեհարան Հայրապետի հոգու հանգստյան համար լսվում է «Քրիստոս որդի աստծու» աղոթքը:

Կարգի «Հայր մեր»-ով ավարտին զանգարանի շուրջ բոլոր հավաքված հավատացյալ բազմությանն է դիմում կաթողիկոսական տեղապահը.

- Այս հանգստյան պատարամանը մենք կանարեցինք մեր սիրելի հայրապետի հոգեպատրանին աղոթելու: Նա այս տունին բնակիչն էր եւ հայրը: Նրա հոգին իր հավիտենական կայքը վերադարձավ: Եւ, սակայն, այս հոգին ամեն կողմ է: Ամեն անգամ, երբ կխայլենք այս շրջապատին մեջ, անդադրման ոլորի հիշենք իր ներկայությունը ամեն տոնական օրերին իրեն բաժնորով սուրբ տաճար մտնելը, պատարագին ներկա լինելը, իր խոսելը, իր քարոզելը, իր հայրենասիրությունը, իր շունչը:

Ամեն անգամ, երբ այստեղից անցնենք, ոլորի նայենք իրեն եւ ասենք Աստված հոգիդ լուսավորի, Վեհափառ Հայրապետ:

Ամենքս մեր աղոթքների մեջ ոլորի հիշենք այդ հոգին, որ մեր հայրը եղավ, հիշենք այդ հոգին, որ մեր Հայրապետը եղավ, աշխարհով գրված մեր հայության մի տեսակ գլուխը, ներկայացուցիչը, ներշնչում եղավ քառասուն տարիներ: Այդ հոգին բանկագին էր, եւ այդ հոգին, բանկագին լինելով, ինքնք հրա արքեր ոլորի երթալ չդառնանք:

Հոգեւոր կարգի ավարտից հետո նույնպես մարդիկ ցաքուցանիում էին այցի գալ երջանկահիշատակ հանգուցյալ Հայրապետի գերեզմանին: Նրանց հոսքը տեւեց մինչեւ երեկո:

ՎԱՌԻԿ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
«Առմենպրեսի» թղթակից

■ *Ամերիկյան մարդասիրական օգնության հիմնարկը բերեց 257 արկղ բժշկական օգնություն:* *ԱՄՆ-ի «Հայերին բժշկական օգնություն» երեւանյան գրասենյակը սեպտեմբերի 4-ին ստացել է 257 արկղ մարդասիրական օգնություն՝ 100 արկղ հակաբիոտիկ, 21 արկղ բժշկական սարքավորում, 136 արկղ սուլֆանիլամիդային դեղորաստ: Գրասենյակի տնօրեն Բաբկեն Վարդանյանը «Նոյյան տաղանի» թղթակցին տեղեկացրեց, որ բաշխումը կատարվել է նույն օրը՝ օրացուցակայանում: 68 արկղ սուլֆանիլամիդային դեղորաստ տրվել է Նորքի Վիրաբուժության եւ օրթոպեդիայի ինստիտուտին, 40 արկղ հակաբիոտիկ ՀՀ առողջապահության նախարարությանը: Արցախ է ուղարկվել 60 արկղ հակաբիոտիկ, 21 արկղ բժշկական սարքավորում, 68 արկղ սուլֆանիլամիդային դեղորաստ:* ԼՏ

Սփյուռքահայ հոգեւորականները Արցախում

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ. Օրերս Արցախում էին գտնվում սփյուռքահայ մի խումբ հոգեւորականներ, որոնք Հայաստան էին ժամանել Վեհափառ հորը վերջին հրաժեշտ տալու: Պատվիրակության կազմում էին Հայաստանի Հայ Առաքելական եկեղեցու բեմի առաջնորդ Ոսկան արք. Գալոյանը, Արգենտինայի բեմի առաջնորդ Իսակ եպիսկոպոս Մուրադյանը, նույն բեմի Թեմական խորհրդի ատենադպիր Շահան Անմահացին, Շվեյցարիայի բեմի առաջնորդ Վիգեն եպիսկոպոս Հայկազանը, Իրանահայ հովվապետ Խաչատուր Մարգիս Սարգսյանը, Արցախի բարեւար լիբանանահայ Վահագն Քիրաբյանը: Հոգեւոր այրերն այցելեցին Հաուի, հանդիպումներ ունեցան Արցախի բանակի մարտիկների հետ: Վերադարձին դպրվիրակության ղեկավար, Արցախի բեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյանը «Փաստի» թղթակցի հետ զրույցում նշեց. «Մեր հոգեւոր հայրերը Արցախ են եկել որպես ուխտավոր, իրենց օրհնությունը բերելու մեզ, տեսնելու մեր կացությունը եւ ըստ այդմ էլ շարունակելու իրենց աջակցությունն Արցախին»:

Թուրքմենստան. Հայ համայնքը առանց կարգավիճակի

Լրացավ Թուրքմենստանի «Աղբյուր» հայկական ընկերության վեց տարին, սակայն ընկերությունն առ այսօր չի գրանցվել այս հանրապետության արդարադատության նախարարության կողմից: Ինչպես «Նոյյան տաղան» գործակալությանն է հաղորդել դեպ ֆակտ զոյություն ունեցող ընկերության ղեկավար, Աշգաբադում ՏԱՍՍ-ի նախկին սեփական թղթակից Վլադիմիր Միրզոյանը, Թուրքմենստանում մինչեւ այժմ ոչ մի հայրենակցական միություն չի գրանցվել: Եւ սա չնայած այն բանին, որ բնակչության ընդհանուր կազմում փոքր չեն ազգային փոքրամասնությունները՝ ուզբեկներ, ռուսներ, դաղստանցիներ եւ այլն: Այդուհանդերձ, Թուրքմենստանի իշխանությունները «Աղբյուր» ընկերությանը, որի կազմում 80 հազար զոյգի հայեր կան, խոչընդոտներ չեն հարուցում կիրակնօրյա դպրոցի գործունեության, ազգային դաստիարակության ուսումնասիրման, մշակութային միջոցառումների անցկացման հարցերում: Բնական դժվարություններն ի հայտ են գալիս նախաձեռնվող գործողությունների նյութական աղահովման գործում, քանի որ կազմակերպությունը, իրավաբանական կարգավիճակ չունենալով, չունի նաեւ հաշվի համար բանկում: «Եթե մեր հաշվի համարում փող լիներ, մենք արդեն իսկ ձեռնամուխ կլինինք 1949 թ. Աշգաբադի երկրաշարժից ավերված հայկական եկեղեցու շինարարությանը: Դիմեցինք են պահանջվում նաեւ Արցախի հայրենակիցներին օգնելու, կոլտնտեսությունային եւ բազմաթիվ այլ միջոցառումներ կազմակերպելու համար»: Թուրքմենստանի հայ համայնքի ղեկավարը հույս է հայտնել, որ «Աղբյուրին» օրենքով սահմանված կարգավիճակ տալու հարցում մեծ դեր կարող է ունենալ Հայաստանի կառավարությունը: Մանավանդ, որ Աշգաբադում սկսել է գործել ՀՀ ԱԳՆ հյուպատոսությունը: ԼՏ

ՈՒՍԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության Գ անձի
«Ազգ» թերթի խմբագիր եւ հրատարակիչ
Հասցեն 375010, Հանրապետության 47
Հեռ. 552941, AT&T (7 88572) 157005
Գլխավոր խմբագիր
ՀԱՍԿՈՒՆ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՄԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ 4520221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Էջը եւ ստանձնեցը ՊՈՒՌԼ ԳԱԼԱՍԵՍՅԱՆ
Apple Macintosh համակարգչային ծառայությունը «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՇՐՋԱՆ ԱՊՀ

Դուդաևի «բանակը» բացահայտ կամ հոդարկված ձևով մարտական վիճակ էր ձեռք բերում Լեռնային Ղարաբաղում, Օսիայում, Ինգուշիայում, Արխազիայում մի խոսքով, բոլոր այն թեժ կետերում, որտեղ, նրա կարծիքով, դիմագրավվում էր ռուսական մեծամոլական-ազգայնականությունը և ոչնչացվում Կովկասի շահերը: Սակայն Ռուսաստանը «վերադարձավ Կովկաս»: Վերադարձավ, երբ հասկացավ, որ իր ներքին քաղաքական վիճակը, թե արտաքին շահերը: Եվ իրավիճակը մեկից փոխվեց: Սկզբում զգուշավոր, ապա աստիճանաբար ավելի համարձակ սկսեցին քննադատվել Դուդաևի վարչակազմի թե տնտեսական գործունեությունը, թե արտաքին քաղաքական կեցվածքը: Վերջին ամիսներին ընդդիմության ձևավորումն ու քարոզչական գործունեությունն այնպիսի թափ ու ծավալներ ստացավ, որ կասկած չմնաց դրանց հնարավոր հետևանքի մասին: Ակնհայտ դարձավ, որ եթե Դուդաևը և իր վարչակազմը կտրուկ չփոխեն կուրսը կամ ինքնակամ չհեռանան, ապա անխուսափելիորեն սրվող քաղաքական իրադրությունը Չեչնիայում դուրս կգա ափերից:

Եվ այսպես, օգոստոսի 31-ի գիշերը, «չեչենական անկախության» հերթական տարեդարձից մեկ շաբաթ առաջ, տեղի ունեցավ Գրոզնու ոստիկանական իշխանությունների և ընդդիմության առաջին զինված բախումը, որը կարող է սկիզբ դնել քաղաքացիական ոստիրազմին Չեչնիայում:

ՀՀ ժամանակավոր խորհրդի մամլո ծառայության հաղորդման համաձայն, Դուդաևի կառավարական զորքերը փորձել են վերահսկողություն սահմանել Դոնի Ռոստովի մայրուղու այն հատվածում, որը գտնվում էր Ռուսլան Լաբազանովին ենթակա զինված խմբավորման ձեռքին: Հարձակումն Արգուն գետի կամրջի վրա հաջողությամբ ետ է մղվել: Հաջող օրը հակադուդաևյան ուժերն անմիջապես լրացուցիչ ուժեր են բերել Արգուն, կառավարական ուժերի հնարավոր նոր հարձակումը կանխելու նպատակով: Չեղարկվել են նաև այլ միջոցառումներ: Մասնավորապես, ինչպես հաղորդել են ընդդիմության մամլո ծառայությունից, «բնակչության ոստիանդարտանենի տվյալների) սեղմ օրակի մեջ են առել հանրաքվեությունը: Գրոզնին վստահաբար հայտնում է, որ Ռուսաստանը գավթել է Նադտերեչնի շրջանը և օդային ճանապարհով այստեղ է առաքում զինված ուժեր և տեխնիկա: Նրանց ասելով, Ռուսաստանն իր ոլեբրյուջեից 150 մլրդ. ռուբլու հատկացում է արել Չեչնիայի համար, որը Նադտերեչնի շրջանի ղեկավարները ՌԴ-ի անունից հանրաքվեության քաղաքացիներին են բաժանում բուրակի և նոպասի ձևով: Իրականում, ոստիկանները տեղական բոլշևիկները, «այդ միամիտ մարդկանց» բաժին է հասնում գումարների 20-30 տոկոսը: Մնացածը բաժին է հասնում իրենց Դուդաևի վարչակազմի հետ «անհաշտ ոգեյուռ մղող մարտիկներ հարգելի» 20-50 մարդու և Ռուսաստանի բարձր ռազմական և վարչական ղեկավարներին, որոնք «խորհուրդներ են տալիս» առաջարկ ընդդիմությանը:

"ՀՀ գլխավոր դատախազ Ռուման Իմաևը, որի տունը սեպտեմբերի 1-ին ոստիկանվել էր անհայտ անձանց կողմից, ընդդիմության առաջնորդներից և ոչ մեկին չի համարում լուրջ քաղաքական հակառակորդ, չնայած Նադտերեչնի շրջանից լուրեր են հասել ընդդիմադիր բոլոր ուժերի Ռուսլան Խասբուլատովի ղեկավարությամբ միավորվելու նախնական համաձայնության մասին: Անցած երկուշաբթի, Կեն-Յուրտ գյուղում տեղի էր ունեցել Ռուսլան Խասբուլատովի հանդիպումը Չեչնիայի նոր առաջնորդների, Ժամանակավոր խորհրդի և ինքնակոչ կառավարության անդամների հետ, սակայն նրանցից շատերը հոռետեսորեն են մոտենում Խասբուլատովի կողմից առաջնորդվելու հեռանկարին: Գրոզնիի նախկին քաղաքապետ Գենտեմիրովը, գլխենալով «ռուսական չեչենցու» զուգահեռ բանակցությունների մասին նախագահ Դուդաևի հետ, ենթադրում է, որ Դուդաևի համաձայության ոստիանում «խաղաղարար» Խասբուլատովն ի վերջո կմիանա ընդդիմությանը, որն իր հերթին, նրան ամբիոն տրամադրելով հանդերձ, «սիրել է» Խասբուլատովին հայտարարելու անել հանրաքվեությունից քաղաքական իշխանությունից հրաժարվելու մասին: Թե Չեչնիայում, թե նրա սահմաններից դուրս, բոլոր հայրենասիրական ուժերը խիստ անհանգստացած քաղաքացիական ոստիրազմի կամ ռուսական միջամտության հետևանքներով, հարդրում են Դուդաևին ինքնական հեռանալ: Միաժամանակ, Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար, միջինասիական համայնքը անգամ առաջարկել է Ղազախստանի, Ուզբեկստանի կամ Կիրգիզստանի նախագահների միջնորդական դերը:

Իսկ ընդդիմությանը Դուդաևին տվել է 8 օր ժամանակ: Նախագահը ոստիրաստվում է անկախության հանդիսությունների, Գրոզնի հրավիրելով Ա. Սոլժենիցինին և Վ. Ժիրինովսկուն: Գրոզնու հրաղարակում երկու շաբաթ է, ինչ Դուդաևի կողմնակիցները գազավաթ են ընդունում (երդվում են կյանքի գնով ոստիանել անկախությունն ու Դուդաևին), իսկ աղեղ ընդունածները կրում են կանաչ գլխակապեր:

Սակայն Լաբազանովը խոստացել է այդ նույն հրաղարակում ցուցադրել Դուդաևի կտրած գլուխը: Երկուսեռանոց, 28-ամյա այդ նախկին հանցագործը արյան վրեժի երդում է տվել և ի նշան դրա կրում է սև գլխակապ... Այսօր լրանում է ընդդիմության վերջնաժամկետը: Դիտորդները հասկացված են, որ նախագահը փոխհամաձայնությունների և փոխզիջումների չի գնա: Կդահիճանի՞ արդյոք Ջոհար Դուդաևը իշխանությունը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կդահիճանի՞ արդյոք Դուդաևը իշխանությունը...

Այսօր լրանում է Չեչնիայի Հանրապետության անկախության երրորդ տարեդարձը: Նախկին խորհրդային բանակի գեներալ Ջոհար Դուդաևը, օգտվելով Ռուսաստանի ներքին անկայուն քաղաքական վիճակից, հույսը դնելով տարանցիկ բեռնատիպոխադրումից, ռուսական նավթատարից ու նավթի վերամշակումից ստացվող ոստրակի և անոտրակի եկամուտների, ինչպես նաև նախկին խորհրդային տարածքում ափված հայրենակիցների «գործարար» օգնության վրա, փորձեց ոչ միայն ստեղծել անկախ պետականություն, այլև միջամտել շրջանի քաղաքական գործընթացներին, առաջատարի դեր վերցնելով:

ՍԱՍՈՒ

«Մոսկովսկի կոմսոմոլեցը» և «Տրուդը» ընթերցողների սիրելին

ՄՈՍԿՎԱ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՆՈՎՈՍՏԻ: Մոսկվացիների 85 և ոստերբուրգցիների 60 տոկոսը շաբաթական կարդում են ամենօրյա դարբերական հրատարակությունների առնվազն մեկ հոդված: Դա դարձ դարձավ Ռուսաստանում զանգվածային լրատվության միջոցների «լսարանի» այն հետազոտությունից, որը ֆրանսիական «Մեդիամետրի ինստիտուտ» ընկերությունն անցկացրեց ռուսական երկու քաղաքների 2100 բնակիչների շրջանում: Պարզվեց, որ Մոսկվայում ամենաշատ հրատարակությունների դասակարգում առաջին տեղում է միայն «Մոսկովսկի կոմսոմոլեցը» և «Տրուդի» ընթերցողների թիվը: Վերջին մեկ տարում փոքր-ինչ նվազել է «Օստանկինո» կայանի և ռուսաստանյան հեռուստաընդարձակի ժողովրդականությունը, թեև դրանք դասակարգվում են առաջատար դիրքերը: Համեմատաբար նոր HTB ալիքը նախընտրում են մոսկվացիների 39 և ոստերբուրգցիների 16 տոկոսը:

■ *Կոպիրեևն ասպանում է: Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրևը հայտարարել է, որ Ռուսաստանը դուրս կբերի իր զինուժը նախկին Հարավսլավիայից, եթե չեղյալ հայտարարվի բոսնիացի սերբերին զենքի մատակարարման էմբարգոն, կամ որոշում կայացվի ՆԱՏՕ-ի ուժերով օդային հարվածներ հասցնել: Միաժամանակ հարցականի տակ է մնում Հռոմի ոստրի այցելությունը Սարաևո: Սերբերը հայտարարել են, որ չեն կարող ապահովել վերջինիս անվտանգությունը:* ՓԱՍՏ

ԼՈՏՎԱ

Վլադիմիր Շումեյկո. Բալթիկայի հետ առավելապես ոչ ռազմական հարցեր

ՎԻԼՆՅՈՒՍ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՌԻԱ-ՍՊՈՒՏՆԻԿ: Ռուսաստանի դաշնակցային ժողովի դաշնության խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոն ժամանեց Վիլնյուս: Այսօր նա կբանակցի Լիտվայի նախագահ Ալգիրդաս Բրազաուսկասի, Սեյմի նախագահ Չեսլովաս Յուրշենասի և վարչապետ Ադոլֆաս Շլեժևիչյուսի հետ: Ինչպես հայտնեց Շումեյկոն Վիլնյուսի օդանավակայանում, բանակցությունների գլխավոր թեման լինելու են փոխադարձ առևտրում առավել բարենպաստման ռեժիմի հաստատման և Կալինինգրադի մարզի կենսապահովման հետ կապված հարցերը: Շումեյկոյի խոսքերով, բալթյան երկրներից ռուսական զորքերի դուրսբերումից հետո փոխհարաբերություններում սկսել են գերիշխել տնտեսական ու մշակութային հարցերը:

ԱՅՐԲԵՋԱՆ

Էլչիբեյ. «Ամկարող Բաքուն փորձում է մեղքը բարդել ընդդիմության վրա»

«Ադրբեջանի ներկայիս իշխանությունները չեն կարողանում ղեկավարել երկիրը, չեն կարողանում հակահարված տալ հայ ագրեսորին, անընդունակ են զբաղվելու ռազմական շինարարությամբ և դրա համար էլ փորձում են ներքին բռնության գնել, որպեսզի նրա վրա գցեն իրենց անհաջողությունների պատասխանատվությունը», «Խաբար-սերվիս» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը: Նա նշել է, որ այս անգամ նրանց թիրախն են դարձել Նախիջևանի Ա.Ժ.Ճ-ի շրջանային բաժանմունքները: Ըստ Ա. Էլչիբեյի, իշխանությունները ցանկանում են ընկնել կազմակերպության ակտիվիստների դիմադրությունը, որպեսզի հետո կատարեն Ռուսաստանի պահանջները: Անդրադառնալով Ա.Ժ.Ճ-ի տնօրինության տակ գտնվող ջոկատների առկայությանը՝ Աբուլֆազ Էլչիբեյը ընդգծել է, որ քանի Հայաստանի կողմից իրական վտանգ գոյություն ունի, այդ ջոկատները կլինեն: «Եթե իշխանությունները հույս ունեն բռնություն հանձնել Նախիջևանի բնակավայրերը, ինչպես հանձնեցին Ջեբրայիլը, Ղուբալին, Շանգելանը և Աղդամը, ապա մենք դա թույլ չենք տա, և մարդիկ կդիմադրեն», ասել է ժողովրդական ճակատի նախագահը: Այն հարցին, թե Ա.Ժ.Ճ-ն ձեռնարկո՞ւմ է հակադիր միջոցառումներ, Էլչիբեյը պատասխանել է, որ ժողովրդական ճակատը պատասխանական դիրք է գրավում:

«Ժողովրդական պատգամավորներ Ֆարաջ Ղուլիեևի, Շահմարդան Ջաֆարովի և Ա.Ժ.Ճ-ի այլ ակտիվիստների դեմ Նախիջևանի հեռուստատեսության կողմից ծավալված զրպարտյան կամպանիան ադրբեջանական ժողովրդին գլխատելու նպատակ է հետապնդում», ընդգծել է Աբուլֆազ Էլչիբեյը: Ըստ նրա, ղեկավարության կողմից նմանօրինակ քաղաքականության անցկացումը կհանգեցնի ադրբեջանական հասարակության պառակտմանը: Միևնույն ժամանակ Ա.Ժ.Ճ-ի ղեկավարը չի բացառել բանակցությունների հնարավորությունը, եթե իշխանությունները հրաժարվեն իրենց ոչ կառուցողական դիրքորոշումից: Այն հարցին, թե նա հույս ունի՞ Բաքու վերադառնալ որպես պետության ղեկավար, Աբուլֆազ Էլչիբեյը պատասխանել է. «Ես երբեք չեմ ձգտել նախագահ դառնալ հենվելով ուժի վրա և հավատարիմ եմ այդ դիրքորոշմանը նաև հիմա: Սակայն ես եմ պետության օրինական ղեկավարը և պետք է պատասխանեմ իմ իրավունքները՝ դիմելով ժողովրդավարական մեթոդների»: ԼՏ

Ուկրաինան չի կարող Ռուսաստանին վճարել իր պարտքերը

ԿԻԵՎ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: Ուկրաինա-ռուսաստանյան հարաբերություններում եղած տարաձայնությունները «նախնական վերբերում են Ռուսաստանի կողմից մատակարարվող գազի, նավթի ու նավթամթերքների դիմաց եղած պարտքերի», հայտարարեց Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսանդր Շոխինը, որը գլխավորում էր ՌԴ պատվիրակությունը Կիևում անցկացվող կառավարական բանակցություններում: «Մենք հիանալի հասկանում ենք, որ Ուկրաինան հնարավորություն չունի վճարելու պարտքերը: Այդուհանդերձ, Ռուսաստանը չի կարող անվերջ անվճար մատակարարել Ուկրաինային», նշեց Շոխինը:

FREE FLIGHT

Կրթական կենտրոնը առաջարկում է

- Ամերիկյան անգլերենի դասընթացներ.
- Ժամանակակից ծրագրեր,
- TOEFL դասախոսներ ԱՄՆ-ից (Mester's Degree)
- Անվճար գրականություն
- Տեխնիկապես կահավորված լսարան

Դասընթացները նախատեսված են ամերիկյան համալսարաններ ընդունվողների, ինչպես նաև անգլերենի կատարյալ գիտելիքներ ստանալ ցանկացողների համար:

Ձեզ սպասում են

Երևան, Աբովյանի փող. թիվ 14 «Երևան» հյուրանոց # 200 սենյակ հեռ. 52-94-18

«ՆԱԻՐԻ - ՏՈՒՐԻՍՏ» ՖԻՐՄԱՆ

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - ՎԱՐՇԱՎԱ - ԵՐԵՎԱՆ

երթուղով, 4 օր, թռիչքը՝ սեպտեմբերի 13-ին, այնուհետև՝ յուրաքանչյուր երեքշաբթի

ԵՐԵՎԱՆ - ԲՐԵՍՏ - ԵՐԵՎԱՆ

երթուղով, թռիչքը սեպտեմբերի 15, 26-ին:

Մանրամասն տեղեկությունների համար դիմեք՝

«Էրեբունի-1» հյուրանոց, ս. 430, 457 և 460 հեռ. 560-494, 580-540

«Անի» հյուրանոց, ս. 617 և 328 հեռ. 594-617, 594-328, 652-862

Arina

digitised by A.R.A.R.@

Արցունք

Արցունախարարություն. Մեդալի հակառակ երեսը

Հայ դիվանագիտությունը փնտրտուքների մեջ

Տարբեր սակայն բուրմ դեսպանի գալ-չգալու, նրան հրավեր ուղարկելու մեջ չէ, կամ էլ Հայաստանի արտգործնախարար Վահան Փափազյանի բուրմական օդանավով Սամբուից Բեյրութ ժամանելու: Ընդհակառակը, տեղեկություններ կան, թե Բեյրութի հայկական գաղութի ամենաարմատական հակադիրներին նույնիսկ հայտնի էր դարձել, որ բուրմ դեսպանը հրավերը չի ընդունելու, եւ հետեւաբար կարիք չկար մի բաժակ ջրում փոթորիկ բարձրացնել ի տես յուրայինների եւ օտարների: Սա, կրկնում ենք, հարցի արտաքին կողմն է: Ներքուստ դա Սփյուռքի դժվարություններն են նոր խոչընդոտների առջեւ, նաեւ Հայաստանի արտաքին հարաբերությունների եղանակությունն ու երբեմն ստիպողական այդ բազմադեմ ու բազմագլուխ «հակայի» դիմաց:

Բեյրութի դեսպանատան դեղը Հայաստանի արտաքին քաղաքական

Հայաստանն այսօր դիվանագիտական ներկայացուցչություններ եւ դեսպանատներ ունի մոտ երկու տասնյակ երկրներում, որոնցից 15-ը՝ հեռավոր արտասահմանում: Հանրապետությունը դրանց վրա տարեկան ծախսում է արտաքուստ ոչ-աննշան մի գումար՝ մոտ 1 մլն. դոլար: Սակայն համեմատած Կովկասի մյուս երկրների հետ, դա մի մեծ բան չէ: Վրաստանի համանման ծախսերը 1,6 մլն. դոլար է: Ադրբեջանն այս տարի իր դեսպանատների վրա ծախսել է ասես-աբսուրդական գումար՝ 10 մլն. 175 հազար դոլար: Թուրքիայի արտաքին քաղաքական ծախսերը տարեկան 700 մլն. դոլար է: Հայաստանում իշխանություններին ենթադրում են դիվանագիտական համարժեք քանակ չգործադրելու մեջ, մինչդեռ բվերն իրենք են խոսում:

Բաքուն Մ. Նախիջեւանում իր քարոզչությունը տանելու համար ա-

Մի հանի տարբեր առաջ Բեյրութի «Զարքոնք» թերթը գրում էր, թե Լիբանանում բուրմ դեսպան Սրգին Բարահանը, ոգեւորվելով բուրմ մի լրագրողի՝ Բեյրութում Հայաստանի դեսպանատան բացման առարկությունը ներկա գտնվելու կաղակցությամբ, զարմանալի է, թե՝ «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների չգոյության դեպքում «դրոսոկոյն» իրեն կդուրսադրե ներկա չգտնվելու»: «Զարքոնքը» հարցնում է, այդ դեպքում «Հայաստանի դեսպանատունը սխալվա՞ծ էր հրավեր ուղարկել բուրմ դեսպանին» եւ ինքն էլ հեգնորեն դատապարտում. «Դրոսոկոյն» այստեղ մեկնաբանություն չի տալիս»: Դեպքը արտաքուստ իրոք «դրոսոկոյնային» էր, եւ բեյրութահայ հարգելի թերթին կարելի էր դատապարտել, որ բեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվահարաբերություններ չկան, սակայն մեկը մյուսի կողմից ճանաչված են եւ գործում են Սեւծովյան տնտեսական համագործակցության ու ԵԱՀԿ-ի շրջանակներում: Գուցե հայկական դեսպանատունը, հաշվի առնելով այս ամենը եւ առաջան, զարգացրեց բարի կամք է գուցաբերել:

ԱՄՆ. օգոստոս 1994. Ռուբեն Շուգարյան, Վահան Փափազյան եւ Ալեքսանդր Արզումանյան

խարարը դիվահարաբերությունների հաստատման փաստաթղթեր ստորագրեց 100-ից ավելի երկրների հետ, իր «իմնյջով», անբանագրոս կեցվածքով նոյաստեղ Հայաստանի ժողովրդավար կերդարի ամրապնդմանը:

Ինքը Փափազյանն ասում է, թե ամենացավոտ հարցը կադրերն են: Չկան մասնագիտական կրթություն ստացած ու փորձ ունեցող մարդիկ: Հայազգի այն դիվանագետները, որ նախկինում աշխատում էին Խ. Միության արտգործնախարարության համակարգում, համաձայնվում էին Հայաստան գալ հիմնականում մի դայմանով. եթե արտասահմանյան որեւէ երկրում դեսպան նշանակվեն: «Հայ ժողովուրդը արտասահման մեծարող ժողովուրդ է եւ մտածում է, եթե մարդ գոնե մի քանի ամիս դրսում չաշխատի, առաջ կլանը լրիվ անիմաստ է», կատակում է Փափազյանը, արդա լուրջ ափեցնում. «Շատերին թվում է, թե մեր դեսպանները արտասահմանում վայելում են կյանքը, սակայն դա այդպես չէ»: Դեսպանատները գտնվում են ծանր ֆինանսական վիճակում: Մոտ երեք տարի առաջ ստեղծված Արտաքին հարաբերությունների հիմնադրամի խակը գնալով նիհարում է: «Այս ընթացքով, հավանաբար 2,5 մլն. դոլարը 1,5 տարի հետո լրիվ կդատարվի. եւ դժվար է ասել, թե միջոցներ որտեղի՞ց ոյնի հայթայթենք: Նոր մուծումներ գրեթե չկան, տեղական հայ համայնքների օգնությունը թեեւ բարյացակամ, սակայն փոքր է: Իսկ կառավարությունը դեսպանատների ֆինանսավորման համար մինչեւ օրս ոչ մի սենթ դեռեւս չի հատկացրել», դժգոհում է Փափազյանը: Սա այն դեպքում, երբ Փափազյանի իսկ խոստովանությամբ, դեսպանատները այսօր շատ ավելի լավ են աշխատում, քան բուն նախարարությունը: Դեռ ավելին, հայ դիվանագետներից մեկն ասում է, թե «այսօրվա Հայաստանի տնտեսություն ասածը լրիվ մարդասիրական օգնություն է, եւ չհաշված մեկ-երկու ոլորտների գործունեությունը, ամբողջ ծանրությունն ընկնում է արտգործնախարարության եւ դեսպանատների վրա»:

Հայաստանն ունի մոտ երկու տասնյակ երկրներում, որոնցից 15-ը՝ հեռավոր արտասահմանում: Հանրապետությունը դրանց վրա տարեկան ծախսում է արտաքուստ ոչ-աննշան մի գումար՝ մոտ 1 մլն. դոլար: Սակայն համեմատած Կովկասի մյուս երկրների հետ, դա մի մեծ բան չէ: Վրաստանի համանման ծախսերը 1,6 մլն. դոլար է: Ադրբեջանն այս տարի իր դեսպանատների վրա ծախսել է ասես-աբսուրդական գումար՝ 10 մլն. 175 հազար դոլար: Թուրքիայի արտաքին քաղաքական ծախսերը տարեկան 700 մլն. դոլար է: Հայաստանում իշխանություններին ենթադրում են դիվանագիտական համարժեք քանակ չգործադրելու մեջ, մինչդեռ բվերն իրենք են խոսում:

Բաքուն Մ. Նախիջեւանում իր քարոզչությունը տանելու համար ամենայն մի ֆիրմայի միանվագ վճարել է 30 հազար դոլար: Այնինչ Լոնդոնյան պյցի վրա ծախսվել 400 հազ. ֆունտ ստեռլինգ,- իմի-ջիայլոց, ավելի վատ արդյունքով. բրիտանական նավթային ընկերություններ գրեթե երեւ բեթեցին նրանից,- մինչդեռ Լեւոն Տեր-Պետրոսյանի համանման այցը կազմակերպվեց գրեթե ոչնչից: Բրիբիբ փեսրոլիումը աշխարհի ամենալուրջ ու խոշորագույն թերթերից մեկին «Ֆայնենշլ թայմզին» 90 հազար ֆունտ վճարեց Ադրբեջանի վերաբերյալ 2,5 էջանոց հոդված տղագրելու համար: Հայաստանի դեպքում աշխատում է լոկ մարդկային գործոնը, կամքը, իհարկե... առանց գրոշի: Սփյուռքի հայերի գործիչներից Երվանդ Ազատյանն ասում է, թե այս հարցում Սփյուռքը դեռեւս իր կարելին չի արել:

Մինչդեռ հակառակում աշխատանք կա դրսում, սկսած բարեգործությունից,- Ղարաբաղի հարց. դրանից ածանցյալ՝ շրջափակումների վերացում, մարդասիրական բեռների տեղափոխում եւ այլն,- վերջացրած տնտեսական, առեւտրական, գիտական, կրթական եւ այլն: «Դեսպանատների աշխատանքի հիմնական ուղղությունը ներկայումս բարգավաճական է, ասում է Վահան Փափազյանը: Եւ երեւի, այդպես էլ շարունակվի, քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել»: Մյուս կողմից, մեծամասամբ բարգավաճանի վրա կենտրոնանալու մի այլ դատճառ էլ կա: Արտգործնախարարությունը համարյա-ասես կադրեր չունի առեւտրատնտեսական, գիտական, մշակութային եւ այլ աշխատանքների համար: «Այդ ամբողջ գործն անհնար է դնել դեսպանի վրա, ասում է Փափազյանը, թեկուզ շատ հաճախ այդպես էլ անում ենք»: Կառավարությունն իր հերթին այդ ուղղությամբ շատդեցնում է, թեկնածուներ առաջարկում: «Ցավոք ասի, նրանց մասնագիտական մակարդակը եւ կարողություններ հեռու են բավարար լինելուց եւ ստիպված նրանց մերժում ենք», ափսոսում է Վահան Փափազյանը:

«Ընդհանրապես, կադրերի ընտրության հարցում աշխատում ենք շատ թծախնդիր լինել, թեեւ երբեմն դա էլ չի օգնում», խոստովանում է նա: Արտգործնախարարությունն այժմ ունի 17 վարչություն, բազմաթիվ բաժիններ՝ մոտ 200 աշխատողով: Նրանցից միայն 15-20 հոգի են մասնագիտական կրթություն ստացել կամ փորձ ունեն: (Համեմատության համար ասենք, որ Ադրբեջանի ԱԳՆ-ում մասների վրա կարելի է թվել կադրային դիվանագետների: «Խորհրդային շրջանում դիվանագիտական բարձր դաշտոններում ադրբեջանցիներ գործնականում չկային», ասում է Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը): Ընդհանրապես, թեեւ բացի Ռուսաստանից, նախկին խորհրդային երկրներում վիճակը գրեթե նույնն է. ֆինանսների, կադրերի եւ փորձի դակաս հանդեղ հսկայական արտաքին խնդիրների, որ այդ երկրներին վիճակված է լուծել: Մինչդեռ հենց Ռուսաստանում, որտեղ կադրերի եւ ֆինանսների հարցը համեմատաբար բարվոք է, (հիմիջիայլոց, այնտեղ էլ կադրերի 25 տոկոս անբավարարություն կա) արտաքին հարաբերությունը եւ դրա դեկավար Կոզիրեւը ընդդիմության ամենաատր հարձակումների են ենթակա, ընդհուդ մինչեւ հրաժարականի դահանջը:

Մյուս կողմից, այս հարցը վա-

Մի հանի տարբեր առաջ Բեյրութի «Զարքոնք» թերթը գրում էր, թե Լիբանանում բուրմ դեսպան Սրգին Բարահանը, դատապարտելով բուրմ մի լրագրողի՝ Բեյրութում Հայաստանի դեսպանատան բացման առարկությունը ներկա գտնվելու կաղակցությամբ, զարմանալի է, թե՝ «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների չգոյության դեպքում «դրոսոկոյն» իրեն կդուրսադրե ներկա չգտնվելու»: «Զարքոնքը» հարցնում է, այդ դեպքում «Հայաստանի դեսպանատունը սխալվա՞ծ էր հրավեր ուղարկել բուրմ դեսպանին» եւ ինքն էլ հեգնորեն դատապարտում. «Դրոսոկոյն» այստեղ մեկնաբանություն չի տալիս»: Դեպքը արտաքուստ իրոք «դրոսոկոյնային» էր, եւ բեյրութահայ հարգելի թերթին կարելի էր դատապարտել, որ բեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվահարաբերություններ չկան, սակայն մեկը մյուսի կողմից ճանաչված են եւ գործում են Սեւծովյան տնտեսական համագործակցության ու ԵԱՀԿ-ի շրջանակներում: Գուցե հայկական դեսպանատունը, հաշվի առնելով այս ամենը եւ առաջան, զարգացրեց բարի կամք է գուցաբերել:

ԱՄՆ. օգոստոս 1994. Ռուբեն Շուգարյան, Վահան Փափազյան եւ Ալեքսանդր Արզումանյան

խարարը դիվահարաբերությունների հաստատման փաստաթղթեր ստորագրեց 100-ից ավելի երկրների հետ, իր «իմնյջով», անբանագրոս կեցվածքով նոյաստեղ Հայաստանի ժողովրդավար կերդարի ամրապնդմանը:

Ինքը Փափազյանն ասում է, թե ամենացավոտ հարցը կադրերն են: Չկան մասնագիտական կրթություն ստացած ու փորձ ունեցող մարդիկ: Հայազգի այն դիվանագետները, որ նախկինում աշխատում էին Խ. Միության արտգործնախարարության համակարգում, համաձայնվում էին Հայաստան գալ հիմնականում մի դայմանով. եթե արտասահմանյան որեւէ երկրում դեսպան նշանակվեն: «Հայ ժողովուրդը արտասահման մեծարող ժողովուրդ է եւ մտածում է, եթե մարդ գոնե մի քանի ամիս դրսում չաշխատի, առաջ կլանը լրիվ անիմաստ է», կատակում է Փափազյանը, արդա լուրջ ափեցնում. «Շատերին թվում է, թե մեր դեսպանները արտասահմանում վայելում են կյանքը, սակայն դա այդպես չէ»: Դեսպանատները գտնվում են ծանր ֆինանսական վիճակում: Մոտ երեք տարի առաջ ստեղծված Արտաքին հարաբերությունների հիմնադրամի խակը գնալով նիհարում է: «Այս ընթացքով, հավանաբար 2,5 մլն. դոլարը 1,5 տարի հետո լրիվ կդատարվի. եւ դժվար է ասել, թե միջոցներ որտեղի՞ց ոյնի հայթայթենք: Նոր մուծումներ գրեթե չկան, տեղական հայ համայնքների օգնությունը թեեւ բարյացակամ, սակայն փոքր է: Իսկ կառավարությունը դեսպանատների ֆինանսավորման համար մինչեւ օրս ոչ մի սենթ դեռեւս չի հատկացրել», դժգոհում է Փափազյանը: Սա այն դեպքում, երբ Փափազյանի իսկ խոստովանությամբ, դեսպանատները այսօր շատ ավելի լավ են աշխատում, քան բուն նախարարությունը: Դեռ ավելին, հայ դիվանագետներից մեկն ասում է, թե «այսօրվա Հայաստանի տնտեսություն ասածը լրիվ մարդասիրական օգնություն է, եւ չհաշված մեկ-երկու ոլորտների գործունեությունը, ամբողջ ծանրությունն ընկնում է արտգործնախարարության եւ դեսպանատների վրա»:

Հայաստանն այսօր դիվանագիտական ներկայացուցչություններ եւ դեսպանատներ ունի մոտ երկու տասնյակ երկրներում, որոնցից 15-ը՝ հեռավոր արտասահմանում: Հանրապետությունը դրանց վրա տարեկան ծախսում է արտաքուստ ոչ-աննշան մի գումար՝ մոտ 1 մլն. դոլար: Սակայն համեմատած Կովկասի մյուս երկրների հետ, դա մի մեծ բան չէ: Վրաստանի համանման ծախսերը 1,6 մլն. դոլար է: Ադրբեջանն այս տարի իր դեսպանատների վրա ծախսել է ասես-աբսուրդական գումար՝ 10 մլն. 175 հազար դոլար: Թուրքիայի արտաքին քաղաքական ծախսերը տարեկան 700 մլն. դոլար է: Հայաստանում իշխանություններին ենթադրում են դիվանագիտական համարժեք քանակ չգործադրելու մեջ, մինչդեռ բվերն իրենք են խոսում:

Բաքուն Մ. Նախիջեւանում իր քարոզչությունը տանելու համար ամենայն մի ֆիրմայի միանվագ վճարել է 30 հազար դոլար: Այնինչ Լոնդոնյան պյցի վրա ծախսվել 400 հազ. ֆունտ ստեռլինգ,- իմի-ջիայլոց, ավելի վատ արդյունքով. բրիտանական նավթային ընկերություններ գրեթե երեւ բեթեցին նրանից,- մինչդեռ Լեւոն Տեր-Պետրոսյանի համանման այցը կազմակերպվեց գրեթե ոչնչից: Բրիբիբ փեսրոլիումը աշխարհի ամենալուրջ ու խոշորագույն թերթերից մեկին «Ֆայնենշլ թայմզին» 90 հազար ֆունտ վճարեց Ադրբեջանի վերաբերյալ 2,5 էջանոց հոդված տղագրելու համար: Հայաստանի դեպքում աշխատում է լոկ մարդկային գործոնը, կամքը, իհարկե... առանց գրոշի: Սփյուռքի հայերի գործիչներից Երվանդ Ազատյանն ասում է, թե այս հարցում Սփյուռքը դեռեւս իր կարելին չի արել:

Մինչդեռ հակառակում աշխատանք կա դրսում, սկսած բարեգործությունից,- Ղարաբաղի հարց. դրանից ածանցյալ՝ շրջափակումների վերացում, մարդասիրական բեռների տեղափոխում եւ այլն,- վերջացրած տնտեսական, առեւտրական, գիտական, կրթական եւ այլն: «Դեսպանատների աշխատանքի հիմնական ուղղությունը ներկայումս բարգավաճական է, ասում է Վահան Փափազյանը: Եւ երեւի, այդպես էլ շարունակվի, քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծվել»: Մյուս կողմից, մեծամասամբ բարգավաճանի վրա կենտրոնանալու մի այլ դատճառ էլ կա: Արտգործնախարարությունը համարյա-ասես կադրեր չունի առեւտրատնտեսական, գիտական, մշակութային եւ այլ աշխատանքների համար: «Այդ ամբողջ գործն անհնար է դնել դեսպանի վրա, ասում է Փափազյանը, թեկուզ շատ հաճախ այդպես էլ անում ենք»: Կառավարությունն իր հերթին այդ ուղղությամբ շատդեցնում է, թեկնածուներ առաջարկում: «Ցավոք ասի, նրանց մասնագիտական մակարդակը եւ կարողություններ հեռու են բավարար լինելուց եւ ստիպված նրանց մերժում ենք», ափսոսում է Վահան Փափազյանը:

«Ընդհանրապես, կադրերի ընտրության հարցում աշխատում ենք շատ թծախնդիր լինել, թեեւ երբեմն դա էլ չի օգնում», խոստովանում է նա: Արտգործնախարարությունն այժմ ունի 17 վարչություն, բազմաթիվ բաժիններ՝ մոտ 200 աշխատողով: Նրանցից միայն 15-20 հոգի են մասնագիտական կրթություն ստացել կամ փորձ ունեն: (Համեմատության համար ասենք, որ Ադրբեջանի ԱԳՆ-ում մասների վրա կարելի է թվել կադրային դիվանագետների: «Խորհրդային շրջանում դիվանագիտական բարձր դաշտոններում ադրբեջանցիներ գործնականում չկային», ասում է Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովը): Ընդհանրապես, թեեւ բացի Ռուսաստանից, նախկին խորհրդային երկրներում վիճակը գրեթե նույնն է. ֆինանսների, կադրերի եւ փորձի դակաս հանդեղ հսկայական արտաքին խնդիրների, որ այդ երկրներին վիճակված է լուծել: Մինչդեռ հենց Ռուսաստանում, որտեղ կադրերի եւ ֆինանսների հարցը համեմատաբար բարվոք է, (հիմիջիայլոց, այնտեղ էլ կադրերի 25 տոկոս անբավարարություն կա) արտաքին հարաբերությունը եւ դրա դեկավար Կոզիրեւը ընդդիմության ամենաատր հարձակումների են ենթակա, ընդհուդ մինչեւ հրաժարականի դահանջը:

Մյուս կողմից, այս հարցը վա-

digitised by A.R.A.R.@

ծանոթ՝ մինչև տեղն ուներ այդ կազմակերպության վարչությունում, երբ դեռևս ՀՀԸ բոլոր լիդերներն այնտեղ էին: Այնուհետև Փափազյանն ստանձնեց ՀՀ նախագահի միջկուսակցական հարցերով խորհրդականի պաշտոնը: Թերևս հենց այդ շրջանից սկսվեցին, բերերից մեկի բնորոշմամբ, «խորհրդավոր խորհրդակցի» դեմ ընդդիմության քննադատությունները:

Կուսակցությունների հանդեպ, մանավանդ ավանդական, նախագահի կեցվածքը չոր է, եռ ասել, թե ո՞վ է կանգնած սրա հիմում նախագահը թե իր խորհրդականը, դժվար է: Այնուամենայնիվ, Տեր-Պետրոսյանն ըստ երևույթին հաշվի առավ քաղաքական բռնությամբ անցած Փափազյանի փորձը եւ կարողությունները, նրան վստահելով արտաքին այդ կարևոր գերատեսության ղեկավարի պաշտոնը: Նախագահի որոշումը ինչ-որ առումով կտրուկ էր, որովհետև մինչ այդ արտաքին քաղաքական հարցերում նա հենվում էր սփյուռքահայերի Բաֆֆի Հովհաննիսյանի եւ մանավանդ իր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի վրա: Վահան Փափազյանին այդ պաշտոնում նշանակելը,- մարդ, որ առաջին երկուսից շատ ավելի լավ գիտի Հայաստանի ներքին կյանքը եւ նախկին խորհրդային տարածքը,- որոշ առումով նշանակում էր քաղաքական ուղղվածության փոփոխություն, կամ ավելի ճիշտ, հավասարակշռվածություն հետավոր եւ մերձակա արտաքին մարտահրավերների միջև: Դա անուղղակիորեն հաստատում է ինքը Փափազյանը: «Հայ-ամերիկյան հարաբերությունները շատ հաջող են, ասում է նա: Այնուամենայնիվ, դրանք դեռ է հավասարակշռվեն»: Նա միաժամանակ ակնհայտ դժգոհություն է հայտնում եւրոպական երկրների, Եւրամիության հետ կապերից: «Մեր հիմնական խնդիրը բոլոր ուղղություններով հավասարակշռված քաղաքականություն վարելն է, շարունակում է նա: Մեր վերջնական նպատակն է Հայաստանը տանել միջազգային հանրության լիիրավ անդամ: Շատ կարևոր են Իրանի, Արաբական երկրների հետ հարաբերությունները, որոնք վերջին շրջանում խորանում են», շարունակում է արտգործնախարարը:

Փափազյանը, այնուամենայնիվ, նախագահի բիմակիցներից շատերի նման հարված է թե ներսում, թե դրսում Սփյուռքի կուսակցական շրջանակներում: Ինքը արտգործնախարար, այլ կերպ է նայում դրան: «Ընդդիմախոսներն հաճախ պնդում են, թե հայերի ազգական հաջողություններ չեն արձանագրվում դիվանագիտական հաջողություններով: Դա անհեթեթություն է, ասում է նա: Ժամանակակից աշխարհում ազգական հաջողությունը ոչ ոքից է բանգնում դիվանագիտության: Ամենուրեք դիվանագիտությունը ստացած դասական բնույթ»: «Իսկ խնդիրը խորությամբ ընթացողներին կարելի է մատների վրա հաշվել: Մամուլում խոսք դասակ, անընդհատ մեղադրանքներից ու ասեկոսեներից այն կողմ չի անցնում», դժգոհում է նա:

«Ինձ մեղադրում են կաղապարային «քմահաճ» քաղաքականության, «յուրայիններին» հովանավորելու եւ «օտարներին» հալածելու մեջ: Սրանք ես համարում եմ նախագահի ու նրա թիմի դեմ ընդդիմության ծավալած ոչ ազնիվ դիմադրության հերթական դրսևորում, երբ փաստերը գլխիվայր շուռ են տալիս: Այդ քննադատներից, կուսակցություններից ոչ մեկը մինչև օրս արտաքին քաղաքականության վերաբերյալ որեւէ հիմնավոր հարց չի ներկայացրել, ընդգծում է Փափազյանը: Ընդհակառակը, երբ Ժիրայր Լիպարիտյանը խորհրդարանի վակ նիստում Ղարաբաղի վերաբերյալ որոշ փաստագրեր էր բացել, ոմանք շտապեցին այդ տեղեկությունները հրապարակել»:

«Քաղաքականությունը ես չեմ վճռում, վճռում է նախագահը: Ես այն իրագործում եմ, ասում է Փափազյանը: Ամեն օր կապի մեջ եմ նախագահի հետ, հաճախ կառավարության հետ, թեեւ քաղաքական հարցերը կառավարությունում քննարկման դեռեւ ճիշտ չէ»: «Մեզնից դժգոհողները բող խոսեն նաեւ մեր շենքային եւ նյութական դայմանների մասին: Ընդամենը 58 հոգու համար նախատեսված այս շենքում խոնվել ենք իրար գլխի, դարձյալ դժգոհում է արտգործնախարարը եւ շարունակում, մեքենաները հին են, համակարգիչները հին, հյուրանոցներ չունենք օտար բարձրաստիճան հյուրերին տեղավորելու համար: Սփյուռքի կոմիտեի կիսավեր շենքը հատկացված է մեզ, սակայն նրանք հրաժարվում են դուրս գալ»:

Ինչքան էլ «կտրուկ» է Փափազյանը յուրայինների հետ, այնքան ճկուն է օտարների դեմքում: Հայ դիվանագետներից մեկը Փափազյանին անվանում է բանակցությունների մարդ: «Փափազյանը շատ հստակ է ներկայացնում Հայաստանի դիրքորոշումը: Բառացիորեն տասը ռոդեում նա կարողացավ համոզել արաբական երկրների ղեկավարներից մեկին Հայաստանի դիրքորոշման իրավացիության մեջ, եւ վերջինս հանդես եկավ մեզ դաշտանող հայտարարությամբ», վկայում է այդ դիվանագետը: «Երիտասարդ արտգործնախարարը մեզ զարմացրեց իր անկեղծությամբ եւ հստակորեն փայլուն ու հստակ տեսակետներով», գրում է արգենտինահայ ահայ բերթերից մեկը:

Երեք-չորս տարվա դաստմության ունեցող արտգործնախարարությունը Հայաստանի մոտ երեք տասնյակ նախարարություններից անմնանաստը չէ, սակայն այնտեղ կատարվող ամեն ինչ այդի առաջ է: Նոր եւ հին նախարարություններ շատ կան, սակայն այս մեկի վրա հայացքը միշտ սեւեռած է: Ոչ միայն ներսի, այլեւ դրսի: Քաղաքական դիտորդների կարծիքով, Մոսկվան եւ Վաշինգտոնը լուռ մրցակցում են ազդեցության համար: Օգոստոսի 10-ին «Իզվեստիան» անբարույց հեգնանքով գրում էր, թե «Նախագահ Քլինտոնը, Սդիտակ տանը հանդիպելով Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, նրա հետ կխոսի նույն բանի մասին, ինչի մասին ժամանակին հայ ղեկավարների-առաջին քարտուղարների եւ այլոց հետ խոսում էին Միխայիլ Գորբաչովը եւ Բորիս Ելցինը, դաստերազմը դադարեցնել»: Միեւնույն ժամանակ ավելացնելով, թե «... Լեւոն Տեր-Պետրոսյանի որոշ երեսնի զինակիցներ, ժամանելով Վաշինգտոն, օգտագործել են անձնական շփումները Ռուսաստանից բողոքելու համար, համարելով դա վարկաստների սիրը շահելու լավագույն եղանակ...»:

Բացը հասավ Վաշինգտոն-Մոսկվա «դիվանագիտական» սուր նետահարումների: Օգոստոսի 23-ին Ռուսաստանի փոխարտգործնախարար Անատոլի Ադամիշինը «Ազատություն» ռադիոկայանի թղթակցի հետ զրույցի ժամանակ հայտնեց, թե «ԱՄՆ որոշ դիվանագետներ հրահանգում են մեզ զբաղվել Լ. Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ այնպես, որ դա չհանգեցնի այդ շրջանում Ռուսաստանի ազդեցության մեծացմանը: Այս շրջանը մեզ համար շատ կարևոր է, ասում են ամերիկացիները: Ավելի լավ է այնտեղ առաջանայունություն լինի, քան կայունություն, որը կմեծացնի Ռուսաստանի ազդեցությունը»: Ադամիշինը սա ուղղակի «լկտիություն» է անվանում: Իրազեկ աղբյուրներն ասում են, թե Մոսկվան խանդոտ է նայում Հայաստանի արտգործնախարարությունում կարևոր դիրքեր զբաղեցնող ամերիկահայերին, եւ նախագահը, որ հավասարակշռված եւ զգույշ քաղաքականության կողմնակից է, դժվարին խնդրի առջեւ է կանգնած: «Անդրկովկասում Մ. Նահանգները նախաստվությունը մեզ է տալիս թե ռազմաքաղաքական առումով, թե ժողովրդավարության», իր հերթին ասում է դեսպան Շուգարյանը: Մինչեւ 1994-ի սկիզբը, մեկուկես տարվա ընթացքում Հայաստանը մոտ 200 մլն. դոլլարի օգնություն է ստացել ԱՄՆ-ից:

Թե ինչ է Մոսկվան Երեւանի համար, դիտորդներ նույնիսկ հարկ չեն համարում բացատրել: Կարծես այնքան բազմակողմանի ու այնքան խորն են, որ դեռեւս անցյալ տարի Մոսկվայում Հայաստանի ներկայացուցչությունն իր համար հատուկ կարգավիճակ էր դահանջում կառավարությունից: Ավելին, իհարկե, քան սովորական դեսպանատան:

Արտգործնախարարության շենքը գտնվում է Երեւանի կենտրոնական դողոցներից մեկի վրա, համայնավար վարչակարգի նախկին քաղաքային կոմիտեի շենքում: Արտաքուստ այն փայլուն է, դրավարելի, սակայն ներսում ճեղքված է: Այնտեղ եւ նրանից ոչ վեր նախագահի նստավայրում, որոշվում է հայ դիվանագիտությունը, որ ժամանակների մեջ տարբեր մայրաքաղաքներում դեկտեմբերից հետո, վերջապես հանգրվանել է մայր հողում, եւ առաջին դատոնությունները ու առաջին դատողները է վայելում:

ՎԱՀՐԱՄ ՄԻՔԱԵԼՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑ

Անկարան միացման կողմնակի՞ց

Սկիզբը էջ 1

Թուրքական կողմի այս հաղթող որոշումը, իհարկե, իր բացատրությունն ունի: Անհանգստացած հարցի մոտալուտ քաղաքական լուծման հնարավորությունից, (ինչը ծեռնտու չէ Անկարային, քանի որ նրան զրկում է կարգում իր զինվորական ներկայությունը դահդանելու հույսերից), թուրքական իշխանություններն շտապեցին վերադառնալ Դենքթաշի որդեգրած «լուծման բացակայությունը նույնդես լուծում է» քաղաքականությանը, ի չիք դարձնելով 20 տարի տեւած բանակցությունների արդյունքները:

Թուրքիայի արտաքին գործերի նախարարության օգոստոսի 30-ի հայտարարությունն ամբողջությամբ հաստատեց այս բնագավառում հակագործակցության փաստը: Հրաժարվելով «Կիպրոսի հարցի լուծման ուղին դաշնակցային դետության ստեղծումն է» բանաձեւից, որին նա հավատարիմ էր վերջին տասնամյակներին, Անկարան աշխարհին հայտնեց տվեց, որ ինքը դոները բաց է թողնում Հյուսիսային Կիպրոսը բռնակցելու իր վաղեմի մտադրության առաջ: Հայտարարությունում մասնավորապես ասվում է.

«Եթե Կիպրոսի հարցը, հակառակ ՀԿԹՀ բարացակամ մոտեցումներին, հակառակորդ կողմի հավասարության սկզբունքին անհարիր միակողմանի նախաձեռնությունների դասճառով չլուծվի, Թուրքիայի Հանրապետությունն իր համար անխուսափելի եւ դատվավոր դարականություն կհամարի դիմել վճռական միջոցների՝ Կիպրոսի թուրք ժողովրդին նման իրավիճակի վտանգավոր հետեւանքներից դաշտպանելու համար»:

Ինչպես հայտնի դարձավ, սույն հայտարարությունը նախապես ստացել է Դեմիրելի, Չիլլերի եւ դաշտպանության նախարար Մեհմեդ Գյուլհանի հավանությունը, հետեւաբար դա դետական քաղաքականություն է: Այն դրական են գնահատել նաեւ ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարները: Նշանակո՞ւմ է արդյոք, որ Թուրքիան մարտահրավեր է նետում միջազգային հանրությանը, մանավանդ այդ հանրության ամենահեղինակավոր կազմակերդությանը՝ ՄԱԿ-ին: Հազիվ թե: Պարզապես սա Անկարայի հերթական մանեւրն է՝ թուրքական համայնքի համար ավելի ծեռնտու դայմաններ դոկելու ակնկալիքով: Այդ մասին է վկայում հայտարարության այն կետը, որտեղ խոսվում է «անվտանգությանը նպաստող միջոցառումների փաթեթի ընդունելի լինելու մասին, եթե վերացվեն դրա իրականացմանը խանգարող հանգամանքները»:

ՄՈՒՐԱՏ ԲՈՅՋՈՒՏ

ՀԱՄԱՌՈՏ

Իսպանիա. Նդաստել Կուբայում ժողովրդավարությանը

ՄԱԴՐԻԴ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կուբայի նկատմամբ Իսպանիայի քաղաքականությունը «անլափ հստակ է. նպաստել նրկա իրավիճակից ժողովրդավարության անցնելուն», հայտարարել է Իսպանիայի կառավարության նախագահ Ֆելիպե Գոնսալեսը այսօր «Պախս» բերթում հրապարակված հարցազրույցում: Մենք փորձել ենք որոշակի գործնական քայլեր անել առավել բաց տուկայական տնտեսությանը նպաստելու համար, հասկանալով, որ դա կունենա քաղաքական հետեւանքներ, նշել է Գոնսալեսը: Նա ընդգծել է, որ Իսպանիան երբեք Կուբայի շրջափակման կողմնակիցը չի եղել:

Բելգիա. Բրյուսելի ազատագրման 50-ամյակը

ԲՐՅՈՒՍԵԼ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տարբեր երկրների զինվորական նվագախմբերի երթով, Գլեն Միլլերի մեղեդիների լուսաերաժշտական կատարումներով լույս երկուշաբթի գիշերն ավարտվեցին գերմանաֆաշիստական զավթիչներից Բրյուսելի ազատագրման 50 ամյակին նվիրված հանդիսությունները: Տասը երկրների զինվորներ էին մասնակցում թագավորական դալատի առջեւ անցկացված զորահանդեսին: Արեւմտաերդական երկրի ազատագրման առթիվ առաջին անգամ զորահանդեսին մասնակցում էին Ռուսաստանի զինվորականներ՝ մի խումբ ծովային հետեւակայիններ:

ԱՄՆ. Տոնեցին Աշխատանքի օրը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ում նշվում է դաշնակցային տոն՝ Աշխատանքի օրը: 100 տարի առաջ նախագահ Գրովեր Քլիվլենդը սահրագրեց հրամանագիր, որով սեպտեմբերի առաջին երկուշաբթին հռչակվում էր դաշնակցային տոն «ի նշան միլիոնավոր ամերիկացիների վաստակի ճանաչման, որոնք զբաղված են հասարակության եւ արդյունաբերության կերտմամբ»:

ԱԱՍ
կոմերատիվ
Կոոպերատիվը առաջարկում է՝ պենզաբլոկ եւ միջնապատային սալիկներ բոլորի համար:
Վճարումը կատարվում է կանխիկ եւ փոխանցումով:
Տեղափոխումը ցանկացած հասցեով:
Պատվերները ընդունվում են
57-00-85
57-04-29
63-79-38
48-95-31
A STYLE 88.18.41

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Սեպտեմբերի 3-ին Ծաղկաձորում, Գողտնի միության հանգստյան տանը սկսված՝ Համազգայինի ղեկավարական Բ ժողովը նշանակալի ուներ ոչ միայն հանրագումարի բերելու անցած չորս տարիների ընթացքում կատարված աշխատանքը, նախանշելու առաջիկայի ծրագրերը, այլեւ ընտրելու նոր կենտրոնական վարչություն: Ժողովի բացման պահից ի-մանալի էր, որ աշխատանքային նիստերին լրագրողների համար մուտքը փակ է լինելու, թեեւ Համազգայինի ներկայացուցիչներից մեկը նշեց, թե ժողովի ընդունած բոլոր բանաձեւերը մամուլին կտրվեն: Իսկ որն Գոնեալյանը պատճառաբանեց, թե ղեկավարակաները ներքին ժողով է, բաց չէ, այն պետք է բնի կենտրոնական վարչության գործունեությունը, դրա համար էլ նպատակահարմար է, որ լրագրողները ներկա չգտնվեն: Հիմնական խնդիրը Եղիկ Գոնեալյանը համարեց այն, որ պետք է ճշգրտվի, թե ի՞նչ կարող է անել Համազգայինը Հայաստանում, ինչպե՞ս կարող է օգնել հայրենիքի մշակութային գործի վերականգնմանը եւ իր հերթին, Հայաստանն ինչպե՞ս կարող է օգնել սփյուռքի մշակութային եւ կրթական կյանքի աշխուժացմանը: Ռազմիկ Դավոյանի կարծիքով, Համազգայինի ղեկավարական ժողովի մայր հայրենիքում անցկացումը հնարավորություն կտա ղեկավարներին մոտիկից ծանոթանալ մեր հասարակության հետ, ավելի լավ հասկանալ հայրենիքի մշակութային եւ կրթական խնդիրները:

Բացի այդ, Համազգայինն այսուհետեւ պետք է շարունակի մեծ ուշադրություն դարձնել ներքին սփյուռքի մշակութային եւ կրթական կյանքի կազմակերպմանը, քանի որ վերջին տարիների արտանոմը մեծ խնդիրներ է առաջ բերել:

Ռազմիկ Դավոյանի ասելով կարելի են հաստատվել ներքին սփյուռքի 56 հայ համայնքների հետ, որոնցից 7-ի հետ ավելի սերտ հարաբերություններ հիմքն է դրված: Մոսկվա, Ղրիմ եւ Նովոռոսիյսկ են գործուղվել ուսուցիչներ, ուղարկվել են դասագրքեր, անհրաժեշտ գրականություն: Սակայն, ինչպես նշեց Եղիկ Գոնեալյանը, այդ աշխատանքի համար Համազգայինը անտարա-մենեջիչների, դարախմբերի հյուրախաղերն է կազմակերպել սփյուռքի զանազան գաղութներում: Ստեղծվել է «Համազգայինի բատրոնը»: Սոս Սարգսյանի գլխավորությամբ: Նյութական աջակցություն է ցույց տվել նաեւ Երեւանի Խրիմյան Հայրիկի դպրոցին եւ Շուշա Արամ Մանուկյան վարժարանին: Ի դեպ, որն Գոնեալյանը մի այլ հայտարարություն էլ արեց, ա-

Հայապահպանության եւս մի կռվան

Ծաղկաձորում բացվեց Համազգային հայ կրթական եւ մշակութային սիրության պատգամավորական Բ ժողովը

«Շրջապատված ենք ահավոր ու խանդիչ ուժերով: Պարտ է նոր ու մոլեռանդ հայություն ստեղծել՝ դիմագրավելու համար այն ուժերը, որոնք ամեն կողմն կը խուժեն հայը ոչնչացնելու համար»: Այս խոսքն ասել է Նիկոլ Աղբալյանը, 1928 թվականի մայիսի 28-ին, այն հանդիսավոր պահին, երբ Կահիրեում ծնունդ առավ Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը: Անցած 66 տարիների ընթացքում Համազգայինը դարձավ ոչ միայն սփյուռքի հայապահպան կարեւոր օղակներից մեկը, այլեւ հիմք դրեց հայ ճեմարանների ու հրատարակչությունների, բատերախմբերի, պարախմբերի ու երգչախմբերի, շարունակեց Տամո Օհանջանյանի, Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալյանի, Ստեփան Եսայանի եւ ուրիշների հիմնած գործը: Այսօր Համազգայինն իր ինը հանձնախմբերով ու տարբեր հասարակություններով գործում է 15 հայ գաղթօջախներում, իսկ երեք տարի է, նաեւ Հայաստանում՝ իր շարքերում ունենալով 5500 անդամ, թեեւ իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է, եթե հաշվի առնենք նրա բոլոր համակիրներին:

ռնեց լիազորությունները վայր դրեցին Համազգայինի կենտրոնական վարչության ատենադեր Եղիկ Գոնեալյանը եւ փոխատենադեր Կարոլիս Հարոյանը:

Ժողովի սկզբում հայտնի դարձավ, որ աշխատանքային նիստերին լրագրողների համար մուտքը փակ է լինելու, թեեւ Համազգայինի ներկայացուցիչներից մեկը նշեց, թե ժողովի ընդունած բոլոր բանաձեւերը մամուլին կտրվեն: Իսկ որն Գոնեալյանը պատճառաբանեց, թե ղեկավարակաները ներքին ժողով է, բաց չէ, այն պետք է բնի կենտրոնական վարչության գործունեությունը, դրա համար էլ նպատակահարմար է, որ լրագրողները ներկա չգտնվեն: Հիմնական խնդիրը Եղիկ Գոնեալյանը համարեց այն, որ պետք է ճշգրտվի, թե ի՞նչ կարող է անել Համազգայինը Հայաստանում, ինչպե՞ս կարող է օգնել հայրենիքի մշակութային գործի վերականգնմանը եւ իր հերթին, Հայաստանն ինչպե՞ս կարող է օգնել սփյուռքի մշակութային եւ կրթական կյանքի աշխուժացմանը: Ռազմիկ Դավոյանի կարծիքով, Համազգայինի ղեկավարական ժողովի մայր հայրենիքում անցկացումը հնարավորություն կտա ղեկավարներին մոտիկից ծանոթանալ մեր հասարակության հետ, ավելի լավ հասկանալ հայրենիքի մշակութային եւ կրթական խնդիրները:

Բացի այդ, Համազգայինն այսուհետեւ պետք է շարունակի մեծ ուշադրություն դարձնել ներքին սփյուռքի մշակութային եւ կրթական կյանքի կազմակերպմանը, քանի որ վերջին տարիների արտանոմը մեծ խնդիրներ է առաջ բերել:

Ռազմիկ Դավոյանի ասելով կարելի են հաստատվել ներքին սփյուռքի 56 հայ համայնքների հետ, որոնցից 7-ի հետ ավելի սերտ հարաբերությունների հիմքն է դրված: Մոսկվա, Ղրիմ եւ Նովոռոսիյսկ են գործուղվել ուսուցիչներ, ուղարկվել են դասագրքեր, անհրաժեշտ գրականություն: Սակայն, ինչպես նշեց Եղիկ Գոնեալյանը, այդ աշխատանքի համար Համազգայինը անտարա-մենեջիչների, դարախմբերի հյուրախաղերն է կազմակերպել սփյուռքի զանազան գաղութներում: Ստեղծվել է «Համազգայինի բատրոնը»: Սոս Սարգսյանի գլխավորությամբ: Նյութական աջակցություն է ցույց տվել նաեւ Երեւանի Խրիմյան Հայրիկի դպրոցին եւ Շուշա Արամ Մանուկյան վարժարանին: Ի դեպ, որն Գոնեալյանը մի այլ հայտարարություն էլ արեց, ա-

միջոցներ չունի:

Պատգամավորական ժողովի խնդիրներից մեկն էլ այն կլինի, թե որքան ֆինանսական աջակցություն կտրվի Հայաստանի շրջանային վարչությանը, որի հիմնական գործը պետք է լինի ներքին սփյուռքի կազմակերպումը: Թեչ վերաբերում է Հայաստանին: ապա Երեւանի պետական համալսարանի եւ Բեյրութի հայագիտական ինստիտուտի միջեւ արդեն կնքվել է համագործակցության մասին համաձայնագիր: Նման մի պայմանագիր էլ կնքվել է Կոմիտասի անվան երաժշտանոցի եւ Բեյրութի Բարսեղ Կանաչյան երաժշտանոցի միջեւ: Ըստ այդ համաձայնագրերի, կկատարվի ուսանողների եւ դասախոսների փոխանակում: Համազգայինը Հայաստանի մշակույթի նախարարության հետ համագործակցությամբ նաեւ շուրջ 250 բատերախմբերի,

սելով, որ յուրաքանչյուր ոք կարող է դառնալ Համազգայինի անդամ, եթե անգամ անդամակցում է այլ կազմակերպության, այդ թվում Թեհեյան մշակութային միությանը: Միայն թե այդ մասին պետք է տեղյակ պահի ղեկավարությանը: «Ես միշտ այցելում եմ Թեհեյանի եւ Բարեգործականի ձեռնարկներին, եթե ինձ հրավիրում են», ասաց որն Գոնեալյանը:

Մի խոսքով, Համազգայինը բացում է ոչ միայն իր դռները, այլեւ լայնացնում գործունեության շրջանակները: Այսօր ղեկավարական Բ ժողովն ըստ երեւույթին կավարտի իր աշխատանքը: Հայտնի կդառնա ոչ միայն նոր ատենադեպի անունը, այլեւ այն նոր ծրագրերը, որ կնախաձեռնի Համազգայինը:

ՏԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ
Ծաղկաձոր-Երեւան

ԵՐԵՎԱՆ

«Արամ Խաչատրյան» համերգասրահը պատկանում է Ֆիլհարմոնիկին

ԵՐԵՎԱՆ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Մշակույթի կենտրոն ստեղծելու եւ «Արամ Խաչատրյան» համերգասրահի երաժշտական վերադարձի մասին խոսակցությունները ճշտելու նպատակով «Փաստի» թղթակիցը դիմեց Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանին:

«Խոսակցություններ կան, թե ես ցանկանում եմ տիրանալ կոնսերվատորիային, օպերային բատրոնին, կոմպոզիտորների միությանը, սակայն ես նման ոչ մի մտադրություն չունեմ, ասաց մաեստրոն: Նման մտածողությունը ագահության ճնշան է: Իմ առաջարկը եղել է համագործակցել, միավորվել եւ ստեղծել մշակույթի կենտրոն, որտեղ բոլոր ամբերը կունենան մեկ հովանավորության գումար: Քանի որ մշակութային հովանավորները հիմ են, եւ խմբերի համար դժվար է նյութական հարցերը լուծել առանձին առանձին: Համագործակցելով մեկ մշակութային կենտրոնում, նրանք նյութապես կօգնեն մեկը մյուսին, ինչպես նաեւ կդիտարկեն մշակույթը այս ծանր ժամի դիմաց: Իմ այս առաջարկը սկսել մեկնաբանվեց: Ես կրկնում եմ, որ երբեք մտադրություն չեմ ունեցել տիրանալու մշակույթի օջախներին, ավելին՝ այսօր աշխատում եմ բեթեւացնել դիրիժորական դարտակարությունները ստեղծագործական աշխատանքի համար:

Ինչ վերաբերում է դահլիճին, այն ժամանակին տրվել է Ֆիլհարմոնիկին, ինչպես նաեւ տիկնիկային բատրոնի շենքը՝ տիկնիկայինին, օպերային բատրոնի շենքը՝ օպերային: «Արամ Խաչատրյան» համերգասրահը դատկանում է Ֆիլհարմոնիկ եւ կամերային ժանրերի բոլոր խմբերին, քայլ ոչ թե դարային կամ ջազային խմբերին, շեշտեց Ճգնավորյանը: Եթե կառավարությունը որոշի խմբերը հետ վերադարձնել «Արամ Խաչատրյան» համերգասրահ առաջ դա դարձյալ սխալ որոշում կլինի, որովհետեւ հաղթահարի բոլոր երկրների Ֆիլհարմոնիկ նվագախմբերն ունեն իրենց դահլիճները:

ՄՈՍԿՎԱ

20 մլն ռուբլի դասագրքերին

Օրերս մոսկովյան «Իմպերիալ» եւ «Վերտիս» ֆիրմաները 10-ական միլիոն ռուբլի հատկացրեցին Հայաստանի մի շարք դպրոցներ դասագրքերով ապահովելու նպատակով: «Իմպերիալի» տնօրեն Արկադի Վարդանյանի կարծիքով, գիտելիքի հանդեպ հակումը միշտ էլ ավանդաբար ուժեղ է եղել հայերի մեջ, եւ դա այն հիմքն է, որը թույլ է տալիս լավատեսորեն խոսել Հայաստանի ապագայի մասին:

«Իմպերիալը» առաջին անգամ չէ, որ հանդես է գալիս բարեգործական նախաձեռնությամբ: Ինչ վերաբերում է «Վերտիսի» տնօրեն Գյուլնազ Յուրկոյին, նա վաղեմի բարեկամական կապեր ունի Հայաստանի հետ:

ԱՐԱՄ ՅԱՍԱՐՈՒՍՅԱՆ
Մոսկվա

ՂԱՐԱԲԱՂ

Շուշին վերականգնում է երբեմնի փառքը

ՇՈՒՇԻ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՄՆԱՐԲ: Լեռնային Ղարաբաղի յուրօրինակ ճարտարապետական հարստությունը շուտով իր արագությամբ կգտնի այս օրերին Շուշի քաղաքում ստեղծվող Հայաստանի ճարտարապետության ազգային բանգարանի մասնաճյուղում:

«Բնավ դպրոցական չէ այդ հաստատության վայրի ընտրությունը, ասաց մասնաճյուղի տնօրեն Արտ Մարտիրոսյանը: Շուշին ժամանակին եղել է հայ մշակույթի դպրոցական կենտրոններից մեկը: Մասնաճյուղի բացումը մեկն է այն քայլերից, որոնց նպատակն է քաղաքին վերադարձնել իր երբեմնի փառքը», նշեց Մարտիրոսյանը:

Նրա խոսքերով, բանգարանի այցելուները կկարողանան ծանոթանալ Արցախի դպրոցական ճարտարապետական եւ հնագիտական հուշարձաններին, ինչպես նաեւ հին հայկական այդ երկրամասի մշակույթին կյանքն արտացոլող ցուցանմուշներին:

ԱՆՑՈՒՂԱՐՁ

Թատրոնը գյուղ է եկել

Հողի աշխատավորի համար լարված օրեր են, աճեցրած բերքը ամբարելու համար ժամանակն ու միջոցները սուղ, բայց եւ այնուհետեւ, նա նման իրավիճակում անգամ հոգեկան բավարարության կարիք ունի: Թատրոնի համար մայրաքաղաք հասնելն էլ մեծ շռայլություն կլինի:

Գյուղ էր եկել «Փյունիկ» բատրոնի փոքրաթիվ խումբը, որը ղեկավարում է սիրված արտիստ Արմեն Խոսդիկյանը:

Արմավիրի շրջանի Սովետական գյուղում ուշ երեկոյան միայն հնարավոր եղավ սկսել ներկայացումը՝ մեր օրերի կյանքն արտացոլող «Էքսրասենս» եւ «Լորի տոնը» երգիծաղատումներով: Արմեն Խոսդիկյանի հետ գյուղի մշակույթի տան բեմում էին Արմեն Մարությանը, Ալլա

Վարդանյանը եւ Բագրատ Գրիգորյանը:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Անի Ժիրարդոն՝ ֆրանսիացի դերասաններից ամենաֆրանսիականը

Մի անգամ Անի Ժիրարդոն՝ դիմելով իր հայրենակից կանանց, ասել է. «Ես ինչու դարձա ձեր ընտանիքի անդամը: Ինչու ես, եւ ոչ թե՝ Մարլեն Դիտրիխը: Որովհետեւ ես պատկերում եմ ձեզ: Ես ձեր հորաքույր-մորաքույրն եմ, մայրիկը, հարսնացուն...»: Հղարտանալով, որ իր մեջ կարողացել է հաղթահարել «աստեղային հիվանդությունը» կոչվող տկարությունը, նա իրեն դասում է այն կանանց շարքը, որոնք պատրաստակամորեն վերցնում են զամբյուղը եւ գնում նպարավաճառի խանութ: Մի կին, որն ընդունակ է ինքնուրույն կառավարել իր ճակատագիրը:

– Երբեք չե՞ք տխրում նկարահանման հրապարակում կամ բեմում նախօրոք իմանալով ամեն ինչ:

– Ոչ: Հնարավոր չէ որեւէ բան նախօրոք իմանալ: Բայց միեւնույն ժամանակ՝ ամեն ինչ գիտես: Գիտես նաեւ, որ ուրախությունների ու դառնությունները հերթագայվում են մեր կյանքում: Այսօր դպրոցական բոլոր դասերը նաեւ դրոդյուսերներ են, ռեժիսորներ: Ձեզ չե՞ն հրապուրում ստեղծագործական այլ ոլորտները:

– Երբեք: Ես դերասանուհի եմ, եւ իմ ստեղծագործության տիեզերքն իրականում անծայրածիր է: Ես դա կարողանում եմ անել: Դերասանն ինքնբավության դասակարգ է. նա կատարում է ուրիշի կամքը, սակայն ոչ ուղղակիորեն: Նա կենդանացնում է անուշնչ մատեղագումը, կյանքի է կոչում մի կտոր բրի վրա խզբզածը: Ես դերն ընթերցում եմ մեկ անգամ, այնուհետեւ մի կողմ եմ դնում մինչեւ նկարահանումների սկիզբը: Հենց այդ ընթացքում է ծնվում անհրաժեշտ ազատությունը, հանդիսատեսից ստեղծագործելու հնարավորությունը, աղաղոհացումը: Թերեւս, մի այլ ժամանակ եւ այլ կացությունում ես խաղայի բոլորովին այլ կերպ, չէ՞ որ ես անընդհատ նույնը չեմ:

– Ինչպե՞ս են դասավորվում Ձեր հարաբերությունները ընտանիքում:

– Շատ ազնիվ մտերիմ եմ դստերս հետ, այժմ էլ զգում եմ նրա բացակայությունը: Ինձ համար ամենագիտավոր մայրս եւ զավակն են. դա դրդռալարն է: Բավական իրական զգում եմ, թե ինչպես է այդ կենդանի թելը՝ բավանցելով մեր նախնիների սերը, ինձ կաղում աղջկան եւ թոռանս հետ: Երկու տարի առաջ մեր ընտանիքում ծնվեց երկար սպասված մանչուկը: Եւ ես ոչինչ չեմ հասկանում, երբ խոսում են սերունդների խզվածության մասին...

«Եվրոպեյսկայա օբզորայա գազետա»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ Մարզական

LEVON TRAVEL

Եւրոպա-96 լուսաբանվում է «Լեւոն Թրավըլի» աջակցությամբ

ԵՎՐՈՊԱ-96

Վան Հիմսը հետախուզության է գալիս Փարիզ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,
ԱՍՏԱՐԱ ԲՈՅԱՋՅԱՆ
Փարիզ

ՀՀ հավաքականն ավարտելով տասնօրյա ուսումնամարզական հավաքը Էխ ան Պրովանսի մոտակայքում գտնվող եւ մեր հայրենակից Տիգրան (Ալբերտ) Աղաբաբյանին դասկանող «Դոմեն դո Տուրնո» հանրահայտ մարզավանում, հուլիսի 4-ին վերադարձավ Փարիզ եւ նույն օրը Փարիզի արվարձաններից Իսի լե Մուլինոյի մարզադաշտում Եւրոպայի առաջնության Բելգիա-Հայաստան խաղից առաջ վերջին ստուգողական հանդիպումը անցկացրեց տեղի ASA հայկական թիմի հետ, որտեղ դայմանագրով հանդես են գալիս Աշոտ Խաչատրյանը, նախկին շիրակցիներ Ալիկ եւ Վարդան Քյոսեյան եղբայրները, ինչպես նաեւ Վաղանցից վերջերս տեղափոխված Համլետ Մխիթարյանը: 3 հազար տեղանոց մարզադաշտի տրիբունաները լեփ-լեցուն էին հանդիսականներով, եւ՝ գերակշռող մասը նորից կազմում էին մեր հայրենակիցները: Խաղին ներկա էին Իսի լե Մուլինոյի քաղաքապետ, Ֆրանսիայի դաշտպանության դատգամավոր, նախկին նախարար դարոն Սանտինին, ՀՀ տարածաշրջանի դետ Ա. Ավետիսյանը, Շվեյցարիայում Հայաստանի հավատարմատար Աշոտ Մելիք-Շահնազարովը, Ֆրանսիայի ֆուտբոլային լիգայի փոխնախագահը, Բելգիայի հավաքականի ավագ մարզիչ Պոլ Վան Հիմսը, որը չնայած բաց թողել է տրիբունայում, բայց շատ արագ հայտնաբերեցին նրան: Խաղը նկարահանում էին Բելգիայի եւ Ֆրանսիայի հեռուստատեսությունների ներկայացուցիչները, հարցազրույցներ էին անցկացնում դաղիոնկերությունների մեկնաբանները: Ցավոք, այսօր մենք զրկված ենք նման հնարավորություններից:

Հայաստանի հավաքականին միացան Մոսկվայից Փարիզ ժամանած վերջին 3 խաղացողները՝ Սարգիս Հովհաննիսյանը, Երվանդ Սոֆիասյանը եւ Երվանդ Կիրաբյանը: Հայաստանի ընտրանին խաղադաշտ դուրս եկավ այսդիսի կազմով՝ Հարություն Աբրահամյան, Երվանդ Կիրաբյան, Վարդան Խաչատրյան, Արամայիս Տոնոյան, Սարգիս Հովհաննիսյան, Սարգիս Հովսեփյան, Ռազմիկ Գրիգորյան, Համլետ Մխիթարյան («Արարատ»), Արսեն Ավետիսյան, Համլետ Մխիթարյան (ASA), Երվանդ Սոֆիասյան:

2-րդ կեսում Հ. Աբրահամյանին, Ե. Կիրաբյանին, Հ. Մխիթարյանին («Արարատ»), Ա. Ավետիսյանին, Ռ. Գրիգորյանին փոխարինեցին Արմեն Պետրոսյանը, Հակոբ Տեր-Պետրոսյանը, Արթուր Պետրոսյանը, Արմեն Շահգելդյանը եւ Աշոտ Խաչատրյանը: Ցավոք վնասվածքներ են ստացել Պողոս Գալստյանն ու Հարություն Վարդանյանը: Լիովին կեսում Աշոտ Խաչատրյանը խաղաց նաեւ իր ակումբային թիմում ASA-ում, եւ ՀՀ հավաքականը չնայած ուներ շոշափելի առավելություն, սակայն մինչեւ ընդմիջում չկարողացավ արդյունքի հասնել: Ընդ որում, 36-րդ րոպեին Համլետ Մխիթարյանը (Ֆրանսիա) գնդակով արագորեն ներխուժեց տուգանային հրապարակ, Աշոտ Խաչատրյանի հետ դայքարում ընկավ եւ մրցավարը նշանակեց 11 մ. հարված: Արամայիս Տոնոյանը բույլ հարվածեց եւ դարդասադահը հեշտությամբ տիրեց գնդակին: 45-րդ րոպեին Երվանդ Սոֆիասյանը երկար փոխանցումով հարվածի դուրս բերեց նույն Համլետ Մխիթարյանին, սակայն վճռական հարվածից հետո գնդակը հետ մղվեց դարդասածողից: 2-րդ կեսում ՀՀ հավաքականի գրոհների թափն էլ ավելի ուժեղացավ: 47-րդ րոպեին Երվանդ Սոֆիասյանը ձախ կողմից գնդակը կախեց մրցակցի տուգանային հրապարակի վրա: Դարդասադահը անհաջող խաղաց եւ գնդակը դուրս այն ժամանակ, երբ արդեն գծից ներս էր անցել: Մրցավարը ցույց տվեց դաշտի կենտրոն: 59-րդ րոպեին 2-րդ գոլի հեղինակ դարձավ Հակոբ Տեր-Պետրոսյանը, որը հեռու տարածությունից հարվածով գրավեց մրցակցի դարդասը: 85-րդ րոպեին հանդիպումը վերջակետ դրեց Արմեն Շահգելդյանը: Հայաստանի հավաքականը խաղը շահեց 3-0 հաշվով: Մարսելի «Օլիմպիկի» 2-րդ կազմի հետ հանդիպման համենատ, այս անգամ ինորհիվ Սարգիս Հովհաննիսյանի եւ Երվանդ Սոֆիասյանի ակտիվ գործողությունների, ՀՀ հավաքականի խաղն ավելի նոդատակասլաց էր դարձել: Նույն օրը երեկոյան Ֆրանսիայի հեռուստատեսության 2-րդ ծրագրով հատուկ հաղորդում եղավ ՀՀ հավաքականի «Դոմեն դո Տուրնոյում» անցկացրած ուսումնամարզական հավաքի մասին: Բելգիայի հավաքականի ավագ մարզիչ Օդեն Վան Հիմսը, որը նույնդես հետախուզական նոդատակներով ներկա է գտնվել Էխ ան Պրովանսում տեղի ունեցած «Օլիմպիկ»-ՀՀ հավաքական հանդիպումը, հայտարարեց. «Մենք աշխարհի առաջնությունում դարտվեցինք Ֆուտբոլային աշխարհում անհայտ Սաուդյան Արաբիայի հավաքականին: Այս անգամ նման բան չդնտի է դատահի: Առաջին իսկ րոպեներից հարդական առաջնության նորեկները ուժեղ ճնշման տակ են ընկնում եւ չեմ կարծում, որ երկար դիմանան»: Իսկ «Օլիմպիկի» փոխարինողների մարզիչ, Ֆրանսիայի հավաքականի եւ «Սենտ Էտիենի» նախկին հանրահայտ դարդասադահ Ժան Կաստանեդան ասաց. «Հայաստանցի ֆուտբոլիստները բարձր տեխնիկա ունեն, սակայն Բելգիայի հավաքականի հետ խաղում արագությունը նրանց չի բավարարի»:

Պոլ Վան Հիմսը

Ներկայացնում ենք Հայաստանի հավաքականի մրցակիցներին

ՄԱՐԿ ԴԵԳՐԻԶ («Անդերլեխտ»), հարձակվող, ծնվել է 1965 թ. սեպտեմբերի 4-ին, Ռոսելարում: Հասակն է 172 սմ, քաշը՝ 70 կգ: Նախկինում հանդես է եկել «Արդոյ» (1976-1980), «Բրյուգե» (1980-1989) թիմերում: Պատանեկան հավաքականի կազմում անցկացրել է 16 խաղ, երիտասարդական հավաքականի կազմում՝ 5 խաղ, օլիմպիական հավաքականի կազմում՝ 5 խաղ: Ազգային հավաքականի կազմում մասնակցել է 51 միջազգային հանդիպումների, որոնցից ա ուաջինը Բելգիա-Արգենտինա (0-2) ընկերական հանդիպումն էր (05.09.1984), խփել է 18 գնդակ. 1991 թ. արժանացել է «ոսկե խաղակոշիկ» մրցանակի: Մասնակցել է Իտալիա-90 եւ ԱՄՆ-94 աշխարհի առաջնություններին:

Մարկ Դեգրիզ

ԼՈՒԿ ՆԻԼԻՍ («Էյնդհովեն»), հարձակվող, ծնվել է 1967 թ. մայիսի 25-ին, Հասելտում: Հասակն է 185 սմ, քաշը՝ 76 կգ: Նախկինում հանդես է եկել «Հալվենվեգ Զոնհովեն» (1976-1980), «Վինտերսլաց» (1980-1986), «Անդերլեխտ» (1986-1994) թիմերում: Պատանեկան հավաքականի կազմում անցկացրել է 20 խաղ, երիտասարդական հավաքականի կազմում՝ 3 խաղ, օլիմպիական հավաքականի կազմում՝ 2 խաղ: Ազգային հավաքականի կազմում մասնակցել է 28 միջազգային հանդիպումների, խփել է 2 գնդակ: Առաջին անգամ ազգային հավաքականի համազգեստը հագել է Բելգիա-Հունգարիա (3-0) ընկերական հանդիպումը (26.03.1988): Մասնակցել է ԱՄՆ-94 աշխարհի առաջնությանը:

Լուկ Նիլիս

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

ՉՎԱՑՈՒՑԱԿ

1994 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ սեպտեմբերի 24-ը

Ուղարկում

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժաման.	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժաման
1------	ՏՈՒ-154	22.15	01.10	R3 1241	ՍԵԹԼԼ	R31242	*01.10	*05.30
1-3-5--	ՏՈՒ-134	08.20	11.25	R3 7117	ԱԾԳԱԲԱՊ	R3 7118	12.25	13.45
1------	ՏՈՒ-154	22.15	21.00	R3 1241	ԹԲԻՐԻՍԻ	R3 1242	**22.00	*05.30
-2--5--	ՏՈՒ-154	13.50	21.00	R3 7095	ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ	R3 7096	23.00	**00.35
------7	ՏՈՒ-134	08.00	10.15	R3 105	ՋԵՆՈԱ	R3 106	11.45	13.10
1234567	ՏՈՒ-154	06.20	09.00	R3 910	ՍՈՍԿՎԱ	R3 909	10.20	12.45
12--5-67	ՏՈՒ-154	13.00	18.15	R3 894	ՍՈՍԿՎԱ	R3 893	19.50	22.15
--34---	ԻԼ-86	13.00	18.15	R3 900	ՍՈՍԿՎԱ	R3 899	19.50	22.40
--3--6-	ՏՈՒ-154	08.20	19.45	R3 7091	ԼՈՆԴՈՆԻ-ԲԻՐՄԻՆՀԵՄ	R3 7092	22.45	**03.55
-2-4-6-	ՏՈՒ-134	13.50	18.00	R3 7207	ՌՈՍՏՈՎ	R3 7208	21.00	**00.30
--4---	ՏՈՒ-154	12.00	18.15	R3 9037	ՍԱՄԱՐԿԱ	R3 9038	21.00	22.30
----5--	ՏՈՒ-154	11.00	17.15	R3 9015	Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ	R3 9016	19.30	22.50
1234567	ՏՈՒ-134	07.30	08.45	R3 7167	ՍՈՉԻ	R3 7168	10.45	12.00
--4---	ԻԼ-86	04.05	10.00	R3 9827	ՓԱՐԻԶ	R3 9828	21.00	**04.00

Երեքուրքի

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժաման.	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժաման
1-3-5--	ՏՍԿ-40	10.45	11.35	PIO-27	ՓՐԻՆՍԻՊ	PIO-28	13.35	14.25
1234567	ՏՍԿ-40	08.00	09.30	PIO-45	ՄԻՆՍԿ	PIO-46	11.30	13.00
1234567	ՏՍԿ-40	11.30	13.00	PIO-43	ՄԻՆՍԿ	PIO-44	15.00	16.30
1234567	ՏՍԿ-40	14.30	16.00	PIO-47	ՄԻՆՍԿ	PIO-48	18.00	19.30
1234567	ՏՍԿ-40	08.30	10.15	PIO-17	ՍՏԱՎՐՈՊՈԼ	PIO-18	11.45	13.30
--3-5-7	ՏՍԿ-40	14.45	16.30	PIO-3	ՍՏԱՎՐՈՊՈԼ	PIO-4	18.45	20.30
-2-4-6-	ՏՍԿ-40	09.00	10.15	PIO-29	ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ	PIO-30	11.45	13.30

Գյումրի

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժաման.	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժաման.
-2-4-6-	ՏՈՒ-134	06.00	07.30	PГ-7249	ԿՊԱՍՆՈՅԱՐ	PГ-7250	09.00	10.30
-2-4-6-	ՏՈՒ-134	11.30	12.40	PГ-7245	ՄԻՆՍԿ	PГ-7246	19.45	20.45
1-3-5-7	ՏՈՒ-134	08.45	13.30	PГ-920	ՍՈՍԿՎԱ	PГ-919	15.05	19.30
-2-4-6-	ՏՈՒ-134	11.30	18.50	PГ-7245	ՍԱՄԱՐԿԱ	PГ-7246	17.50	20.45

** ժամանումը/մեկնումը հաջորդ օրը: *ժամանումը/մեկնումը 2 օր հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀԱ գրասենյակներ կամ Ձեր ճամփորդական գործակալին:
Հեռ. 53-05-82, 53-06-62

Իրանի Իսլամական Հանրապետությունում արտադրվող լայն սպառման ապրանքների

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌՔԸ

մեծ հնարավորություն կրնձեռի Հայաստանի գործարարներին՝ կնքել շահավետ առեւտրական պայմանագրեր, դառնալ միջնորդ իրանցի արտադրողների եւ Ռուսաստանի, Վրաստանի, ԱՊՀ մյուս երկրների ապառողների միջեւ:

Ցուցահանդեսում կներկայացվեն՝
- Սննդամթերք,
- Կենցաղային իրեր,
- Կահույք,
- Հագուստեղեն, գործվածքներ, թելեր,
- Դեղորայք եւ բուժսարքավորումներ,
- Անասնաբուժական սարքավորումներ եւ դեղորայք,
- Ավտոմեքենաներ եւ դահեստամասեր,
- Ծիանոյուք եւ այլ ապրանքներ:

սեպտեմբերի 9-18-ը, ժամը 11-19-ը:

Համեցեք մեզ մոտ և Դուք չեք ճեռանա առանց շահավետ գնումի

Ցուցահանդեսը կգործի Մարզա-համերգային համալիրում

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա ուսուցման բաժնի սարքակված ուսուցմամբ ավագ դպրոց վարժարանը կաստարում է 1994-95 ուս. տարվա ֆիզմաթ. կենսաբանաքիմիական, հումանիտար, տեխնիկա-տնտեսագիտական բնագիտական բնագիտական 9-րդ եւ 10-րդ դասարանների աշակերտների ընդունելություն:

Շրջանավարտները կստանան հանրակրթական դպրոցի միջնակարգ կրթության ատեստատ եւ հատուկ վկայական վարժարանը ավարտելու մասին:

Վարժարանում ուսուցումը անվճար է:

Ընդունվել ցանկացողները դեռ է դիմում ներկայացնեն մինչեւ սեպտեմբերի 25-ը Փոտանջյան 52-դ հասցեն, 225 սենյակ:

Ուսումնական դասընթացների բնականոն բնաբանը երաշխավորվում է:

Դասընթացները կսկսվեն հոկտեմբերի 1-ից ինստիտուտի գլխավոր մասնաշենքում (մետրոյի «Զորավար Անդրանիկ» կայարանի մոտ):

հեռ. 52-08-90, 56-49-18

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

digitised by A.R.A.R.@

AMERICAN EDUCATIONAL SERVICES, INC.

OPEN UP A WORLD OF OPPORTUNITY FOR YOURSELF

Obtain your American Degree at your own leisure and without leaving the comfort of your home Awarded by a fully-approved University in Southern California

Degree Programs offered:

Associate of Arts (AA), Bachelor of Arts (BA), Master of Science (MS), Master of Business Administration (MBA), Doctor of Business Administration (D.B.A.), Doctor of Psychology (Psy.D.), Doctor of Law (J.D.), ,Doctor of Philosophy (Ph.D.) and Doctor of Science (Sc.D.)

in

Business, Computers, Law, Technology Management, and Behavioral Science

All Interested parties contact
American Educational Services, INC.
Representative Office in Yerevan, Armenia:
Address: Sevak Street No 5 Yerevan, 375044 Armenia
Telephone Number 286-890

A STYLE

«ԵՎԱ»

ուսումնական կենտրոնը հրավիրում է Ձեզ

Սեպտեմբեր 1-3-ամսյա դասընթացներում հետևյալ մասնագիտությունների գծով.

- օդերևութաբանական գործ, ծրագրային փաթեթների եւ ծրագրավորման լեզուների ուսուցում IBM PC համակարգիչների վրա
- անգլերեն լեզու սկսնակների համար Communicative course in English, Learning American English, The Cambrige English course (2 ցիկլով), ամերիկյան ուսումնական հաստատություններ ընդունվողների համար TOETL
- բանկային գործ
- հաշվապահություն եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ
- կոմբեիկա եւ էռիլյացիա
- մերսում (մասաժ)

Դասընթացներն ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկաս) հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:

Մենք երաշխավորում ենք ոչ միայն ուսուցման բարձր մակարդակ, այլեւ հարմարավետ դասասենյակներ քաղաքի կենտրոնում: Ընդունում ենք ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11-ից 16-ը:

Հասցեն՝ Սարյան 4 (Սարյանի տուն-թանգարանի դիմաց) Հեռախոս 58-21-22

«ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ» ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայ գործարարների կորպորացիա» բաց բաժնետիրական ընկերությունն անհաս ծեռնարկներից, ոչնչական եւ մասնավոր ծեռնարկություններից կամ այլ տնտեսական կազմակերպություններից ընդունում է 5 հազարից մինչեւ 50 հազար ԱՄՆ դոլարի արժողությամբ արտադրական ինքնաստեղծ առաջարկ-ծրագրեր ֆինանսավորման կամ հանձնող ծեռնարկություն ստեղծելու նպատակով:

Ծրագիրը ներկայացնող կողմն իր դիմումի մեջ պետք է տեղեկություններ տա նաեւ հետեւյալ հարցերի վերաբերյալ.

- հանձնառ կենսագրական տեղեկանք
- արտադրական գործունեության դարը եւ արտադրանքը
- ինչպիսի արտադրա-տեխնիկական բազա ունի (տարածք, շենքեր, մեքենաներ եւ այլն)
- սեփական առկա դրամական չափը
- ամսական կամ տարեկան շահույթի չափը կամ շահութաբերության տոկոսը
- ներկայացվող ծրագրի համար անհրաժեշտ գումարի եւ դրա իրագործումից ակնկալվող շահույթի չափը (նմանատիպ տնտեսագիտական հիմնավորմամբ)
- ինչ երաշխիքներ կարող է ներկայացնել
- ծրագիրը հիմնավորող այլ հավելյալ տեղեկություններ

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել առնվազն երկու երաշխավորագիր ազգական չհանդիսացող հեղինակավոր անձանցից:

Վերոհիշյալ փաստաթղթերը փակ ծրարների մեջ հանձնել «Հայ գործարարների ֆորումի» երեւանյան գրասենյակ տնօրեն Գագիկ Պողոսյանին ամենաուշը մինչեւ ս/թ հոկտեմբերի 10-ը:

Հասցեն՝ Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, 40 սենյակ, հեռ. 52-05-89

ԱՆԳԼԵՐԵՆ

OK ENGLISH OK

Ինտենսիվ դասընթացներ

Հրավիրում է «ՕՔԵՅ» կոմանդատային ընկերությունը: Մոգոցիացնում ենք խոսել, կարդալ, գրել: Դասերը՝ առավոտյան, ցերեկը, նոսկաթում: Գինը՝ ոչնչի համար, բան վարդ:

268592
343019, 267023

ՔԱՆԳԱՀԱՐԵՔ ՀՆԵՌ ՀԻՄԱ

«ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ» ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայ գործարարների կորպորացիա» բաց բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ հետեւյալ բաբեր ոլորտների համար.

1. Գործադիր տնօրեն(ուհի) (անհրաժեշտ է տնտեսագիտական բարձրագույն կրթություն եւ անգլերեն լեզվի իմացություն).
2. Հաշվապահ.
3. Իրավախորհրդատու (անգլերեն լեզվի իմացությունը ցանկալի է).
4. Ռեֆերենս-քարտուղար(ուհի) (անգլերեն լեզվի իմացությամբ).

Առաջին երկու դաշտերի համար անհրաժեշտ է նաեւ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձ: Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

- դիմում տնօրենների խորհրդի անունով համապատասխան դաշտի համար, որի մեջ անհրաժեշտ է նշել նաեւ, թե դիմողն ինչ աշխատավարձ է ակնկալում եւ անհրաժեշտության դեպքում երբվանից կարող է սկսել աշխատանքը:
- կենսագրական տեղեկանք, որը պետք է պարունակի նաեւ դիմողի աշխատանքային որակավորման, լեզուների իմացության, համակարգչային փորձառության վերաբերյալ տվյալներ, այլ տեղեկություններ (եթե կան)
- առնվազն երկու երաշխավորագիր ազգական չհանդիսացող հեղինակավոր անձանցից.
- համապատասխան վկայականներ (դիպլոմի պատճեն եւ այլն, եթե կան):

Վերոհիշյալ բոլոր փաստաթղթերը փակ ծրարների մեջ հանձնել «Հայ գործարարների ֆորում»-ի երեւանյան գրասենյակ տնօրեն Գագիկ Պողոսյանին ամենաուշը մինչեւ ս/թ հոկտեմբերի 3-ը:

Հասցեն՝ Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, 40 սենյակ, հեռ. 52-05-89

բաժնետիրական առեւտրային բանկը

ընդունում է ավանդներ եւ վճարում տոկոսադրույքներ
US $ - 1 ամսով 6 տոկոս
3 ամսով 20 տոկոս
ՌՈ - 3 ամսով 30 տոկոս
դրամ - 3 ամսով 30 տոկոս

տրամադրում է վարկ
US $ - ամիսը 12 տոկոս
ՌՈ ռուբլի - ամիսը 20 տոկոս
դրամ - ամիսը 35 տոկոս

բացում եւ վարում է բազմավալյուտային հաշվարկային եւ կուտակված հաշիվներ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար

կատարում է փոխանցումներ եւ դրամային սպասարկում Հայաստանի սահմաններից դուրս

հաճախորդներին տրամադրում է վարկային քարտեր Visa, Union Card, Master Card

գնում եւ վաճառում է տարադրամ

կատարում է դրամարկղային սպասարկում Visa, Union Card, Master Card, Diners Club քարտերով

A STYLE

ՍՊԻՐՏԻ ԲԱՑԱՌԻԿ, ԳԵՐՇԱՀԱՎԵՏ ՎԱՃԱՌՔ

Վճարելով այսօր, այսօրվա գներով եւ միայն դրամով (կանխիկ կամ անկանխիկ) դուք, հոկտեմբերի 10-ից սկսած, մեկ շաբաթվա ընթացքում, կստանաք բժշկական սպիրտի ծեր գնած խանակները (նվազագույնը 220 լիտր) մեկ լիտրը 580 դրամ արժեքով:

Շտապեցեք օգտվել բացառիկ այս գործարքից, քանզի սպիրտի խանակությունը անսահմանափակ չէ, իսկ գերշահավետ այս հնարավորությունը կգործի մինչեւ սեպտեմբերի 15-ը:

Սա երազ չէ, այլ իրականություն, որն առաջարկում է Հայաստանի վաճառականների միության նախաձեռնությամբ ստեղծված եւ հանրապետությունում ամենամեծ կանոնադրական հիմնադրամը ունեցող «Համաստեղություն» կորպորացիան:

Մեր հասցեն՝ Վարդանանց 13 (Կինոյի տան հարեւանությամբ), 2-րդ հարկ, հեռ. 57-03-72

«ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆ» ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

A STYLE

ARMENTRUST

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մթնոլորտ
մեզ կարիք ունի
սիրելու

ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԵՎԱՆ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 27
ՀԵՌ. 58.67.18, 58.67.19
ՖԱՔՍ. (007 8852) 56.11.84

«Գարեգանյան» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արամյանների 2 Գրանցման թիվ 65. Դասալ 69149. Պատվեր 1838 Տրամանաք 5000 Ստորագրված է տպագրության 5. 09. 1994 Գինը 10 դրամ

digitised by A.R.A.R.@